



**«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ
ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ
ԿԱՆՈՆՆԵՐ**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ և ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ..... 5

2.1 Բանկի և Հաճախորդի միջև Հարաբերութիւնների կարգավորում (ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ) 5

2.1.22 ԲԱՆԿԸ ՈՒՆԻ ԳՐԱՎԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՔԱՐՏԻՆ ԱՌԿԱ ԲՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՐ՝ ՈՐՊԵՍ ԲԱՆԿԻ և ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋև ԱՌԿԱ և/կամ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԲՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԶԷԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ, ԿԱՆՈՆՆԵՐՈՎ և/կամ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ: ՔԱՐՏԻՆ ԱՌԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԶԱՓՈՎ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, և ԲԱՆԿԻ ԳՐԱՎԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՆՇՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՐ: ԴԵՊՈԶԻՏԱՅԻՆ ՀԱՇՎ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԲԱՆԿԻ և ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋև ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԱՇՎԵՀԱՄԱՐԸ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ԶԻ ԿԱՐՈՂ ԳՐԱՎ ԴՆԵԼ ՔԱՐՏԻՆ ԱՌԿԱ և ԱՊԱԳԱՅՈՒՄ ՄՈՒՏՔԱԳՐՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ԱՌԱՅ ԲԱՆԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅԱՆ: .9

3. ԲԱՆԿԻ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ 9

3.1 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ 9

3.2 ԱՆՁՆԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ (PIN ԿՈԴ)..... 10

3.3 ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ և ԱԿՏԻՎԱՅՈՒՄ..... 11

4. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 12

4.1 ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 12

4.2 ԿԱՆԽԻԿԱՅՄԱՆ և ԿԱՆԽԻԿԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 12

4.3 ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՔԱՐՏԵՐՈՎ 13

4.4 ՄՆԱՅՈՐԴԻ ՀԱՐՅՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14

4.5 ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՆՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՎՈՂ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵ..... 14

4.6 ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՎԻՐՏՈՒԱԼ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ..... 19

4.7 ՔԱՐՏԻՑ ՔԱՐՏ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ..... 20

4.8 ԱՅԼ ՈՉ ԵՐԵՍ ԱՌ-ԵՐԵՍ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ 20

4.9 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԿՈՐՈՒՄՏ..... 20

4.10 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ..... 21

4.11 ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ԱՌԿԱ ՄՆԱՅՈՐԴԻ ԴԻՄԱՅ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ..... 22

4.12 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ և ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՓՎԿՈՒՄ 22

4.13 ՎՃԱՐԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԶՎՓԻ ԳԵՐԱԾԱԽՍ 23

5 ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ..... 24

5.1 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎՃԱՐ..... 24

5.2 ՏԱՐԵԿԱՆ ԿԱՄ ԱՄՍԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՁ..... 24

5.3 ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՄՆԱՅՈՐԴ..... 24

5.4 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԿԱՄ PIN ԿՈԴԻ ՎԵՐԱԹՈՂԱՐԿՄԱՆ ՎՃԱՐ..... 24

5.5 ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ ԿԱՆԽԻԿԱՅՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 25

5.6 ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 25

5.7 ԱՅԼ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ..... 25

5.8 ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ 25

6 ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 25

6.1 ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔ..... 25

6.2 ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՅՈՒՄ..... 25

7 ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 26

7.1 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ..... 26

7.2 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՖԳԻԱՍ-Ի ՄԻՋՈՑՈՎ 26



7.3 Վճարման քարտի օգտագործումը առևտրի կետերում 27

7.4 Զեղծարարության դեմ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը 27

7.4.1 Բանկը վճարման քարտի օգտագործման շարժումները կանխարգելիչ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՐՈՂ Է իրականացնել վճարման քարտերի կամ գործարքների հնարավոր զննման կատարման, եթե կատարված գործարքները, ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆԵՐՔԻՆ ՉՈՒՑՆԵՐԻ, ՀԱՄԱՎՈՒՄ ԵՆ ՄԻՋԻՆ ԿԱՄ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ: 27

7.4.2 Քարտատաները ստիճանով ՏԱԼԻՍ ԵՆ ԻՐԵՆՅ ԼՐԻՎ և ԱՆԿԵՐԱՊԱՀ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ 7.4.1 կետով իրականացվող միջոցառումների վերաբերյալ: 27

7.4.3 Բանկի կողմից վճարման քարտերի կամ գործարքների կատարման ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՅԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՔԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՓԱՏՏԸ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՍՏՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԲԱՆԿԸ ՔԱՐՏԱՊԱՆԻ ՆԱԽԱՁԵՒՆՈՒԹՅԱՆԲ ԿԱՐՈՂ Է իրականացնել վճարման քարտի և գործարքների ադապտացիոն:..... 27

7.4.4 Ստիճան կանոնների 7.4.1 կետով սահմանված միջոցառումներից ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՉԻ ԿՐՈՒՄ: 27

7.4.5 Վճարման քարտի կամ գործարքների կատարման դեպքում ՉԻ ԴԱԴԱՐՈՒՄ ՎՃԱՐՄԱՆ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ և ԳԱՆՁՈՒՄԸ: 27

8 ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ 27

8.1 Բոլորքարկման գործընթաց 27

9 ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԿԱՎՈՒՆՔՆԵՐԸ..... 29

9.1 Բանկը ՊԱՐՏԱԿՈՐԿՈՒՄ Է՝ 29

9.2 Բանկն իրավունք ունի՝ 29

10 ՔԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ..... 31

10.1 Քարտատանը ՊԱՐՏԱԿՈՐԿՈՒՄ Է՝ 31

10.2 Քարտատան իրավունք ունի՝ 32

11 ԲԱՆԿԻ և ՔԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 33

12 ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 35

12.1 Պաշտպանագրի կնքումը 35

12.2 Անհարժակարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր) 36

13 ԾԱՆՈՒՑՈՒՄ 36

13.1 Հասոցման դեպք 36



1. Սահմանումներ և հապավումներ

«**Բանկ**»՝ Արդշինինվեստբանկ ՓԲԸ,

«**Վճարային քարտ**»՝ Բանկի սեփականությունը հանդիսացող մագնիսական, միկրոպրոցեսորային (չիպային) կոնտակտային կամ առանց հիմնի, հիբրիդ (համատեղված) կամ թվայնացված (թոկեն) տեղեկատվության պահպանման հնարավորությամբ բանկային քարտ կամ այլ իր, որն իր գործողության ժամկետի չափով տրամադրվում է քարտապանին՝ իր քարտային հաշվից համապատասխան վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան իրենց ցանցում յուրաքանչյուրի մասով հասանելի գործարքներ՝ այդ թվում փոխանցումներ, անկանխիկ վճարումներ, կանխիկ միջոցներ ստացում կամ մուտքագրում կատարելու նպատակով,

«**Չանհատկանացված քարտ**»՝ Միայն ՀՀ դրամով թողարկվող վճարային քարտ, որի վրա չի նշվում քարտապանի անունը և ազգանունը, և որի համար սահմանված են սպասարկման պայմանների որոշակի սահմանափակումներ,

«**POS-տերմինալ**»՝ էլեկտրոնային ծրագրատեխնիկական սարք, որն օգտագործվում է վճարային քարտերով գործարքների և դրանց հավաստագրման ստացման համար՝ վճարային քարտի համապատասխան տեղեկատվական կրիչի տվյալները կարդալու կամ վճարային քարտի վավերապայմանները ձեռքով մուտքագրելու միջոցով,

«**ՖԳԻԱԱ (Ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքավորում)**»՝ ավտոմատ ինքնասպասարկող սարք, գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված ինքնասպասարկման էլեկտրոնային ծրագրատեխնիկական այն սարքը, որն ապահովում է ֆինանսական գործառնությունների իրականացումն առանց ֆինանսական կազմակերպության աշխատակցի միջամտության: ՖԳԻԱԱ-ներն արտացոլում են հասանելի գործառնությունների ցանկի վերաբերյալ տեղեկատվություն:

«**Հաճախորդ**»՝ վճարային քարտ կամ վճարային քարտով վարկային գիծ ստանալու համար Բանկին դիմած ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ընդ որում իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում տարեկան շրջանառությունը՝ ըստ նախորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների և Բանկի կարծիքով այլ հավաստի տվյալների (ԱԱՀ և շահութահարկի հաշվարկներ և այլն), պետք է կազմի 400.000.000 ՀՀ դրամ և ավելի:

«**Քարտապան**»՝ հաճախորդ, ում տրամադրվել է վճարային քարտ,

«**Փաստացի քարտապան**»՝ իրավաբանական անձ և(կամ) անհատ ձեռնարկատեր, քարտապանին տրամադրված վճարային քարտը քարտապանի անունից փաստացի տիրապետող և օգտագործող անձ,

«**Սակագներ**»՝ վճարային քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված միջնորդավճարների և տուժանքի (տուգանք և տույժ) չափը սահմանող փաստաթուղթ, ընդ որում Բանկը կարող է սահմանել ընդհանուր և անհատական սակագներ,

«**Առաջարկ-դիմում**»՝ դեբետային/հաշվարկային քարտ տրամադրելու և սպասարկելու դիմում կամ վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և (կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմում, որը Բանկի կողմից սահմանված դեպքերում, կարող է ներկայացվել նաև համացանցում էլեկտրոնային տեքստի հաստատմամբ կամ ձայնագրվող հեռախոսակապի միջոցով,

«**Պայմանագիր**»՝ Բանկի և հաճախորդի միջև կնքվող վճարային քարտի տրամադրման և սպասարկման խառը պայմանագիր, որն ընդգրկում է սույն կանոնները, Առաջարկ-դիմումը և սակագները, և կնքված է համարվում Բանկի կողմից հաճախորդի Առաջարկ-դիմումն ակցեպտավորելու, այն է՝ քարտային հաշիվ բացելու (ակցեպտ) պահից,

«**Քարտային հաշիվ**»՝ քարտապանի անունով և Պայմանագրի համաձայն բացված բանկային հաշիվ, որն օգտագործվում է վճարային քարտով կամ դրա վավերապայմանների օգտագործմամբ կատարված գործառնությունների ձևակերպման և փոխհաշվարկների իրականացման համար,

«**Գերաձախ**»՝ քարտային հաշվի օգտագործման համար բավարար հասանելի մնացորդից (այդ թվում՝ վարկային միջոցներից) ավել օգտագործված գումար, որն առաջացնում է քարտային հաշվին դեբիտորական պարտք և ենթակա է մարման հաճախորդի կողմից,

«**Չնվազող մնացորդ**»՝ Բանկի սակագներով սահմանվող քարտային հաշվի մնացորդ, որի օգտագործման վրա դրված է սահմանափակում,

«**Վարկավորման պայմաններ**»՝ Բանկի կողմից հաստատված վճարային քարտերով տրամադրվող վարկային գծերի տրամադրման էական պայմաններ և (կամ) պայմանների փաթեթներ: Վարկավորման ընդհանուր պայմանները հրապարակվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում:



«Վարկային գիծ»՝ Վարկավորման կանոններին և Վարկավորման պայմաններին (ընդհանուր կամ անհատական) համապատասխան Հաճախորդին հաշվարկային կամ Վարկային քարտով տրամադրվող վերականգնվող կամ նվազող վարկային սահմանաչափ,

«Վարկային սահմանաչափ»՝ վճարային քարտով տրամադրվող վարկային միջոցների առավելագույն սահմանաչափ,

«Հաճախորդի առաջարկ»՝ հաճախորդի կողմից Բանկին ներկայացվող առաջարկ (օֆերտա), որի միջոցով հաճախորդն առաջարկում է Բանկին իր հետ կնքել Պայմանագիր՝ համաձայն սակագնի,

«Stop-list»՝ միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից վարվող ցուցակ, որտեղ քարտապանի կամ Բանկի ցանկությամբ տեղադրվում են հափշտակված վճարային քարտերի համարները՝ դրանց միջոցով գործարքների իրականացումը կանխելու նպատակով,

«Հավաստագրում»՝ վճարային քարտով գործարքի իրականացման թույլտվություն,

«Հավաստագրման սահմանաչափ»՝ քարտապանին որոշակի ժամանակահատվածի համար վճարային քարտի միջոցով գործարքներ կատարելու համար թույլատրելի սահմանաչափ,

«Վճարային սահմանաչափ»՝ քարտապանի օգտագործման համար հասանելի ընդհանուր գումար, ներառյալ սեփական և վարկային միջոցները,

«Stand-in հավաստագրում»՝ միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից վճարային քարտով իրականացվող գործարքի համար տրվող հավաստագրում՝ Բանկի պրոցեսինգային ընկերության անհասանելիության դեպքում,

«3D Secure համակարգ»՝ վիրտուալ միջավայրում իրականացվող գործարքների անվտանգությունն ապահովելու նպատակով ստեղծված գործիք, որից օգտվելու պարագայում հաճախորդը իր կողմից վիրտուալ միջավայրում կատարած գործարքը հաստատում է իր բջջային հեռախոսին SMS-հաղորդագրության կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով ստացված կոդի կիրառմամբ:

«CVV2/CVC2 կոդ»՝ վիրտուալ միջավայրում գործարքների հավաստագրման համար վճարային քարտին կցված եռանիշ կոդ:

«ԱԳՄ»՝ ավտոմատ գանձման մեքենա:

«ՎՀՀ»՝ Վճարահաշվարկային համակարգ:

«Հաճախորդի վերաբերյալ Բանկին տեղեկատվություն պրամադրելու ձև»՝ ճանաչիր քո հաճախորդին (KYC) հարցաթերթիկ:

«Հեռակառավարման համակարգ» կամ «Համակարգ»՝ ARDSHININVESTBANK I-BANKING համակարգ, որի միջոցով էլեկտրոնային փաստաթղթերի և/կամ հատուկ տեխնիկական միջոցների (սերտիֆիկատներ, բանալիներ և այլն) կիրառմամբ Բանկը հաճախորդին մատուցում է առանձին բանկային ծառայություններ:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Բանկի և հաճախորդի միջև հարաբերությունների կարգավորում (պայմանագրի առարկա)

2.1.1 Սույն կանոնները կարգավորում են Բանկի կողմից հաճախորդին վճարային քարտի թողարկման, տրամադրման և սպասարկման, ինչպես նաև՝ հաճախորդի կողմից վճարային քարտի օգտագործման կարգը՝ ՀՀ օրենսդրության, ՀՀ Կենտրոնական բանկի իրավական ակտերի, համապատասխան վճարահաշվարկային համակարգերի (Visa International, MasterCard Worldwide, Armenian Card) կանոնների և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

2.1.2 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Առաջարկ-դիմումում լրացված տեղեկությունների ամբողջական, հավաստի և իրականությանը համապատասխան լինելու համար, պարտավորվում է ներկայացված տեղեկատվության յուրաքանչյուր փոփոխության դեպքում տեղեկացնել Բանկին: Բանկն իրավունք ունի ստուգել հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ու եղանակով:

2.1.3 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկն իրավունք ունի հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել համապատասխան վարկային բյուրոյին կամ վարկային ռեգիստրին՝ վարկային պատմությունը պարզելու կամ ստեղծելու նպատակով, ինչպես նաև պրեմիալ քարտերի գծով կոնսիերժ ծառայությանը (միայն ԱԱՀ, հեռախոսահամար, ծննդյան օր, էլեկտրոնային հասցե) վերջինիս կողմից հաճախորդների սպասարկումն (ըստ անհրաժեշտության նաև հեռահար) ապահովելու համար, որի շրջանակներում նշված տվյալները կարող են փոխանցվել ՌԻ կրահիսկական «Ինֆոֆոկուս» ՍՊԸ-ին VISA Concierge ծառայությունը մատուցելու նպատակով: Ընդ որում Հաճախորդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է պահանջել անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում, ինչպես նաև սույն



համաձայնության հետ կանչում կամ մշակման հետ կապված այլ գործողության կատարման վերաբերյալ գրավոր դիմելով Բանկին, որի արդյունքում կկատարվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողությունները ողջամիտ ժամկետներում: Հաճախորդը համաձայն է, որ սույն կետով տրված համաձայնությունը գործում է մինչև իր և Բանկի միջև կնքված համապատասխան Պայմանագրերի դադարումը:

2.1.3.1. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն) իր անձնական տվյալները, այն է՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Հաճախորդի ինքնությունը՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Բանկի հետ պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների (առաջարկների), այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

2.1.3.2. Սույն կետի ուժով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին և վերջինիս լիազորում է Բանկին տրամադրել իր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել՝

- վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս (սույն կետը պարտադիր պայման է վարկային հայտ ներկայացնելիս),
- Մոնիթորինգ իրականացնելիս,
- Այլ ծառայություններ առաջարկելիս,

Ինչպես նաև տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից Հաճախորդի հետ պայմանագիր կնքելու դեպքում տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի, առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու, «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն Բանկին տրամադրի իր ապագայում առաջացող ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

Հաճախորդը սույնով տեղեկացվում է, որ վարկային հարցումների քանակը կարող է բացասական ազդեցություն ունենալ վարկային ամփոփ գնահատականի վրա: Եթե հարցումը կատարվում է մոնիթորինգի շրջանակներում, ապա այն բացասական ազդեցություն չի ունենում:

Սույն կետի ուժով Հաճախորդը լիազորում է Բանկին իրեն վերաբերելի ցանկացած տեղեկություն, որը հասանելի է դարձել Բանկին, ներառյալ իր անձնական տվյալները, տրամադրել այլ կազմակերպություններին և Բանկի գործակալներին, այդ թվում՝ վարկային բյուրոներին, ապահովագրական ընկերություններին կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին, տեղեկատվական ընկերություններին (այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ»-ին), նշված տեղեկությունները ստուգելու, վարկային պատմությունը պարզելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ապահովվածություն ստանալու համար: Միաժամանակ Հաճախորդը լիազորում է Բանկին այլ ընկերություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև իր աշխատանքային վայրից ստանալ իր անձնական տվյալները և Հաճախորդի վերաբերյալ այլ տեղեկություններ:

Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

Հաճախորդը սույնով տրամադրում է իր անվերապահ համաձայնությունը, որ Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ հարկային մարմիններին տրամադրի տեղեկատվություն հաճախորդի, վերահսկող անձանց, դրանց քարտային/բանկային հաշիվների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայով (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) ու «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրով, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հրապարակած Միասնական հաշվետվողական ստանդարտի և դրա մեկնաբանության շրջանակներում:

2.1.3.3. Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Հաճախորդի կողմից տրված, և Բանկը ստանում է Հաճախորդի անձնական տվյալները մշակելու իրավունք՝ Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման



նպատակով, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին/անհատներին տրամադրելու նպատակով, պայմանով, որ դա անհրաժեշտ է Բանկին համապատասխան ծառայությունը մատուցելու և/կամ Բանկի համար աշխատանքներ կատարելու և/կամ գույք ձեռքբերելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

2.1.3.4. Հաճախորդի կողմից անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում՝ Բանկը պարտավորվում է դադարեցնել անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել, կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հաճախորդի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Հաճախորդի և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հաճախորդի անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Հաճախորդի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

2.1.3.5. Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:

2.1.4 Հաճախորդը սույնով անհետկանչելիորեն լիազորում և իրավունք է վերապահում Բանկին Հաճախորդի բոլոր Քարտային հաշիվներից գանձել (առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության) Բանկին վճարման ենթակա բոլոր պարտավորությունների գումարները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով սակագներում նշված բոլոր տեսակի միջնորդավճարները, տույժանքերը, ինչպես նաև՝ Բանկի կողմից մատուցված ծառայությունների դիմաց՝ այդ թվում որպես հարկային գործակալ, վճարման ենթակա գումարները: Վճարային քարտի վավերականության ժամկետից շուտ վճարային քարտից հրաժարվելու դեպքում՝ գանձված հիմնական միջնորդավճարները չեն վերադարձվում:

2.1.5 Պայմանագրի շրջանակներում Բանկը հաճախորդին կարող է տրամադրել վճարային քարտ, կից վճարային քարտ (քարտապանի կամ նրա կողմից լիազորված անձի անունով):

2.1.6 Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել և/կամ լրացնել սույն կանոնները, սակագները, որոնք Բանկի հետ մինչև փոփոխված կանոնների, սակագների հրապարակումը Պայմանագիր կնքած Հաճախորդների համար ուժի մեջ են մտնում դրանց հրապարակման ամսաթվին հաջորդող 7-րդ (յոթերորդ) աշխատանքային օրը, իսկ նոր հաճախորդների համար՝ հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում: Ընդ որում՝ հրապարակման ամսաթիվ է համարվում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում դրանց տեղադրման ամսաթիվը: Հրապարակման օրը Բանկը տեղեկացնում է հաճախորդին սույն կանոնները, սակագները փոփոխելու վերաբերյալ ստորև նշված տեղեկացման եղանակներից որևիցե մեկի միջոցով՝

- Բանկի մասնաճյուղերում և գլխամասային գրասենյակներում տեղեկատվական ստենդերի և այլ տեսանելի վայրերում տեղեկատվության տպագիր տարբերակների տեղադրում,
- Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղեկատվության տեղադրման միջոցով, (www.ardshinbank.am),
- քարտապանի բջջային հեռախոսին SMS հաղորդագրության ուղարկման կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով:

2.1.7 Սույն կանոններում և սակագներում կատարվող բոլոր փոփոխությունները և լրացումները՝ դրանց ուժի մեջ մտնելու պահից, տարածվում են նաև մինչև դրանց ուժի մեջ մտնելը կնքված Պայմանագրերից բխող հարաբերությունների վրա, եթե դրանք կիրառելի են այդ հարաբերությունների նկատմամբ: Քարտապանն իրավունք ունի հրաժարվել նշված փոփոխություններից և լրացումներից մինչև դրանց ուժի մտնելը՝ սույն կանոններով սահմանված կարգով լուծելով Բանկի հետ կնքած պայմանագիրը և ամբողջությամբ կատարելով ստանձնած պարտավորությունները:

2.1.8 Բանկը կարող է որոշակի ծառայությունների տրամադրման նպատակով քարտապանին ուղարկել առաջարկություն SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ տեսակի հաղորդագրությունների տեսքով: Քարտապանի կողմից նշված առաջարկի ընդունման համար որոշակի գործողությունների իրականացումը



համարվում է ծառայությանը բաժանորդագրվելու կամ ստանալու համար հաճախորդի կողմից տրված համաձայնություն:

2.1.9 Սույն կանոնների փոփոխման դեպքում Կանոնների բոլոր նախորդ խմբագրությունները ենթակա են պահպանման և հասանելի են հաճախորդներին դրանք ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 4 (չորս) տարվա ընթացքում:

2.1.10 Վճարային քարտը (ներառյալ դրա բոլոր վերաթողարկումները) և (կամ) վճարային քարտի ռեկվիզիտները (քարտի համար, տեսակ վավերականության ժամկետ, քարտի դիմերեսին կամ դարձերեսին տպագրված հաճախորդի անունը և ազգանունը և մյուս տվյալները) հանդիսանում են քարտային հաշվին առկա դրամական միջոցների (այդ թվում՝ քարտապանի սեփական միջոցների կամ Բանկի կողմից տրամադրված վարկային գծի) կառավարման գործիք:

2.1.11 Վճարային քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և ենթակա է ոչնչացման՝ դրա վավերականության ժամկետի ավարտի դեպքում, դրանից հրաժարվելու դեպքում կամ Բանկի պահանջով: Ընդ որում, վճարային քարտի ոչնչացումն իրականացվում է հաճախորդի կողմից:

2.1.12 Բանկը, հաճախորդի դիմումի համաձայն, կարող է թողարկել հաճախորդի կամ նրա կողմից լիազորված անձանց համար կից վճարային քարտեր, որոնք կցված են միևնույն քարտային հաշվին:

2.1.13 Քարտապանը պատասխանատվություն է կրում իր վճարային քարտին՝ որպես կից քարտ թողարկված բոլոր վճարային քարտերով իրականացված գործարքների համար:

2.1.14 Քարտապանը թույլատրում (համաձայնվում) է Բանկին՝ պատշաճ սպասարկման ապահովման և անվտանգության նկատառումներից ելնելով, վարելու իրենց միջև իրականացվող հեռախոսազանգերի ծայնագրություն: Տվյալ ծայնագրությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործվում են որպես ապացույց տարբեր տեսակի վիճելի հարցերի կարգավորման համար:

2.1.15 Սույն կանոնների և հաճախորդի առաջարկ-դիմումի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է սույն կանոններին:

2.1.16 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը և թույլտվությունը, որպեսզի Բանկը երրորդ անձանց բացահայտի իր, որպես Բանկի հաճախորդի անվան և ազգանվան կամ անվանման առաջին տառերը, ինչպես նաև անվանման կամ ազգանվան տառերից կամ ընտրական որևէ տառ, Բանկում հաշիվ ունենալու հանգամանքը՝ առանց բանկային և/կամ քարտային հաշիվների, հաշվի և/կամ քարտի համարների բացահայտման: Հաճախորդը պարտավորվում է սույն կետի ներքո կատարված բանկային գաղտնիքի բացահայտման կապակցությամբ Բանկին չներկայացնել որևէ բողոքներ և/կամ պահանջներ: Այն դեպքում, երբ Հաճախորդը չի ցանկանում, որպեսզի հիշյալ տեղեկությունները բացահայտվեն, ապա Հաճախորդը Բանկին ներկայացնում է համապատասխան դիմում՝ Բանկի համար ընդունելի ձևով:

2.1.17 Դեբետային/հաշվարկային քարտի, այդ թվում՝ կից քարտի տրամադրման, վերաթողարկման և սպասարկման Բանկի կողմից մատուցվող ծառայությունից հեռահար եղանակով օգտվելու ցանկության դեպքում Հաճախորդը սույնով ընդունում է, որ իր կողմից Բանկի պաշտոնական ինտերնետային կայքից ներբեռնված, լրացված, ստորագրված և սքանավորված Առաջարկ-դիմումը/Պայմանագիրը, այլ փաստաթղթերը, այդ թվում՝ հաճախորդի վերաբերյալ Բանկին տեղեկատվություն տրամադրելու ձևն էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով Առաջարկ-Դիմումում/Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից Բանկին ներկայացնելով/ուղարկելով, ծանոթացել, համաձայնել, ընդունել և ստորագրել է Առաջարկ-դիմումը/Պայմանագիրը, սույն կանոնները, պայմանները, այլ փաստաթղթերն ու տեքստերը, դրանք ճշգրիտ են և արժանահավատ, բխում են Հաճախորդի կամքից և ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ունեն լիարժեք իրավական ուժ:

2.1.18 Հաճախորդն ընդունում է, որ Բանկի կողմից հեռահար եղանակով Դեբետային/հաշվարկային քարտի, այդ թվում՝ կից քարտի թողարկման, վերաթողարկման և սպասարկման ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն կարող է ստանալ Բանկի Հեռախոսային կենտրոնի միջոցով՝ +374 (60) 655 000 հեռախոսահամարին զանգահարելով:

2.1.19 Հաճախորդն ընդունում է, որ հեռահար եղանակով Դեբետային/հաշվարկային քարտի տրամադրման և սպասարկման ծառայությունից օգտվելու համար Բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխանությունը որոշվում է՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված տեղեկատվությունը այլ բանկերում ունեցած հաշիվների մասին: Նշված տեղեկատվության հիման վրա Հաճախորդը տեղեկացվում է Բանկի պահանջներին անհամապատասխանության մասին, իսկ համապատասխանության դեպքում Բանկը տեղեկացնում է Հաճախորդին վերջինիս կողմից ներկայացված և Բանկի համար ընդունելի ֆինանսական կազմակերպությունում գործող հաշվից Բանկի սակագներով սահմանված



Վճարային քարտերի թողարկման համար վճարը SWIFT համակարգի միջոցով անկանխիկ փոխանցելու կարգի ու պայմանների մասին:

2.1.20 Հաճախորդն ընդունում է, որ հեռահար եղանակով չանհատականացված քարտեր չեն թողարկվում:

2.1.21 Հաճախորդն ընդունում է, որ Համակարգը հնարավորություն է ընձեռում Համակարգի միջոցով հասանելի ծառայություններից օգտվելու համար Բանկին դիմել նաև առցանց հարթակում, այդ թվում՝ Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով հեռահար եղանակով ստորագրել և Բանկ ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումներ, կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումներ, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր (այդ թվում՝ տեղեկություններ, տեղեկանքներ, համաձայնություններ, թույլտվություններ և այլն), ստանալ Բանկի դիրքորոշումը պայմանագիր կնքելու, պայմանագրում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումներն ակցեպտավորելու կամ մերժելու վերաբերյալ: Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Համակարգի միջոցով համապատասխան էջում ստորագրման ենթակա դաշտերում հավաստող նշում դնելով և/կամ համապատասխան հավաստման կոճակը սեղմելով, ամբողջությամբ համաձայնում է համապատասխան էջում, հղումում և/կամ փաստաթղթում զետեղված պայմանների, տեղեկությունների և այլ դրույթների հետ, ինչը Հաճախորդի համար առաջացնում է համապատասխան իրավունքներ, պարտականություններ և այլ իրավական հետևանքներ, և ունի նույն իրավական նշանակությունը, ինչ ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:

2.1.22 Բանկն ունի գրավի իրավունք Քարտին առկա բոլոր միջոցների նկատմամբ՝ որպես Բանկի և Հաճախորդի միջև առկա և/կամ հետագայում առաջացող Հաճախորդի բոլոր պարտավորությունների կատարման ապահովում, եթե այլ բան սահմանված չէ այլ պայմանագրերով, կանոններով և/կամ պայմաններով: Քարտին առկա դրամական միջոցները գրավադրված չափով համարվում են համապատասխան դեպոզիտային հաշվում պահվող դրամական միջոցներ, և Բանկի գրավի իրավունքը գործում է նշված դրամական միջոցների նկատմամբ: Դեպոզիտային հաշիվ է համարվում Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրում նշված հաշվեհամարը: Հաճախորդը չի կարող գրավ դնել Քարտին առկա և ապագայում մուտքագրվող միջոցները՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

Գրավի իրավունքի ուժով Բանկը կարող է Քարտին առկա և ապագայում մուտքագրվող դրամական միջոցների վրա կիրառել սահմանափակում (արգելադրում) Հաճախորդի կողմից Բանկի հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, կամ Հաճախորդի գույքի (այդ թվում՝ դրամական միջոցների), կամ դրանց մի զգալի մասի վրա ՀՀ օրենքով սահմանված կարգով կալանք, կամ արգելանք դրվելու կամ այդպիսի արգելանքների կիրառման էական հավանականության առաջացման, ինչպես նաև այլ դեպքերում, երբ առկա են այլ հիմքեր, որոնք Բանկի կարծիքով կարող են վտանգել Բանկի պարտավորությունները Հաճախորդի կողմից կատարելու ունակությունը:

2.1.23 Բանկն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկա դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու և իրացնելու դրանք, այդ թվում՝ դրամական միջոցները խախտված պարտավորության համապատասխան չափի դիմաց անակցեպտ գանձելու և Պայմանագրից բխող պարտավորությունների մարմանն ուղղելու եղանակով:

3. Բանկի վճարային քարտեր

3.1 Վճարային քարտեր

3.1.1 Դեբետային/հաշվարկային քարտերի թողարկման նպատակն է կանխիկ դրամի փոխարինումը անվտանգ, հարմարավետ և ձեռնտու վճարային գործիքով:

3.1.2 Դեբետային քարտերը նախատեսված են քարտապանի սեփական միջոցների կառավարման և դրանց սահմաններում թույլատրելի գործառնությունների իրականացման համար:

3.1.3 Հաշվարկային քարտերը նախատեսված են քարտապանի սեփական միջոցների և Բանկի կողմից տրամադրված օվերդրաֆտի կամ վարկային գծի սահմաններում թույլատրելի գործառնությունների իրականացման համար:

3.1.4 Վարկային քարտերի թողարկման նպատակն է հաճախորդներին՝ իրենց հայեցողությամբ օգտագործման համար վարկավորման իրականացումը և վարկավորման առավել հարմարավետ պայմանների տրամադրումը հաճախորդներին:

3.1.5 Բանկը վճարային քարտերը թողարկում է և դրանց համապատասխան հաշիվները բացում է սակագներով սահմանված արժույթներով՝ հաճախորդի Առաջարկ-դիմումի համաձայն:

3.1.6 Քարտատիրոջ անունը և ազգանունը չեն արտացոլվում չանհատականացված քարտերի վրա, իրավաբանական անձ հաճախորդի դեպքում նշվում է կազմակերպության անվանումը, Անհատ ձեռնարկատեր



հաճախորդի դեպքում անուն ազգանունից առաջ նշվում է Ա/Ձ, ինչպես նաև քարտի վրա նշվում են փաստացի քարտապանի անունը և ազգանունը:

3.1.7 Եթե քարտապանի մոտ առկա է համոզմունք կամ կասկած վճարային քարտի վավերապայմանների՝ այլ անձանց հասանելի լինելու և չարտոնված օգտագործման վտանգի հետ կապված, ապա անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում դիմել Բանկին:

3.1.8 Վճարային քարտը կարող է վնասվել մագնիսական դաշտի ջերմաստիճանի, ֆիզիկական ուժի ազդեցությունից կամ այլ պատճառներով: Այն չի կարելի պահել բջջային հեռախոսի, տնտեսական և օֆիսային տեխնիկայի մոտակայքում: Բանկը վերաթողարկում է վնասված քարտը՝ համաձայն Բանկում գործող սակագների:

3.2 Անձնական նույնականացման համար (PIN կոդ)

3.2.1 PIN կոդը նախատեսված է անձնական օգտագործման համար և հանդիսանում է վճարային քարտի չարտոնված օգտագործման դեմ պաշտպանության և հաճախորդի նույնականացման միջոց:

3.2.2 PIN կոդի պատրաստման և հաճախորդին տրամադրման գործընթացների իրականացումը նախատեսում է գաղտնիության պահպանում, որի պարագայում PIN կոդը կարող է իմանալ բացառապես քարտապանը, որին այն տրամադրվել է:

3.2.3 Քարտապանը PIN կոդը կարող է ստանալ փակ ծրարով կամ SMS-հաղորդագրության կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով: Ծրարով PIN կոդը ստանալիս հաճախորդը պարտավոր է ստուգել և համոզվել, որ PIN ծրարը տրամադրվում է իրեն անվնաս վիճակում, որի համար ստորագրվում է համապատասխան փաստաթուղթ: SMS-հաղորդագրության կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով մեկանգամյա PIN կոդը հաճախորդը ստանում է Բանկի բանկոմատ քարտը մուտքագրելուց և «Միանգամյա PIN կոդի ստացում» ստեղծը սեղմելուց հետո: Հաճախորդը պարտավոր է անմիջապես մուտքագրել SMS-հաղորդագրության կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով ստացված միանգամյա PIN կոդը բանկոմատ և զենեացնել նոր PIN կոդ: Բանկն իրավունք ունի ինքնուրույն որոշել PIN կոդի տրամադրման եղանակը:

3.2.4 Քարտապանը պետք է պահպանի PIN կոդի գաղտնիությունը և այն հասանելի չդարձնի այլ անձանց՝ քարտային միջոցների անվտանգության նկատառումներից ելնելով: Բանկը պատասխանատվություն չի կրում քարտապանի կողմից իր PIN կոդը երրորդ անձանց հասանելի դարձնելու հետևանքով քարտի ոչ օրինական և քարտապանի կողմից չարտոնված օգտագործման համար:

3.2.5 Վճարային քարտի PIN կոդը չի օգտագործվում ինտերնետում կամ ոչ երես առ երես գործառնություններ իրականացնելու համար: Ուստի քարտապանը չպետք է իր PIN կոդը մուտքագրի ինտերնետում կամ ոչ երես առ երես այլ գործառնություններ կատարելու ժամանակ:

3.2.6 Քարտապանը կարող է փոխել իր PIN կոդը, օգտվելով բոլոր այն ՖԳԻԱՍ-ներից, որոնք սպասարկում են այդ ծառայությունը: PIN կոդը ՖԳԻԱՍ-ի միջոցով փոփոխելու ֆինանսական և իրավական հետևանքների ռիսկը կրում է քարտապանը:

3.2.7 Եթե քարտապանի մոտ առկա է համոզմունք կամ կասկած PIN կոդի՝ այլ անձանց հասանելի դառնալու հետ կապված, ապա անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում փոխել PIN կոդը՝ օգտվելով բոլոր այն ՖԳԻԱՍ-ներից, որոնք սպասարկում են այդ ծառայությունը:

3.2.8 PIN կոդի 3 (երեք) անգամ հերթական՝ անկախ փորձերի միջև ընկած ժամանակահատվածից, սխալ մուտքագրման դեպքում քարտի կիրառումը կկասեցվի, և գործարքների կատարումը կմերժվի, սակայն ԱԳՄ-ները չեն առգրավի վճարային քարտը վերադարձնելով այն հաճախորդին:

3.2.9 Քարտի ապակասեցման համար քարտապանը կարող է հեռախոսագանգով դիմել Բանկի Հեռախոսային կենտրոն +374 (60) 655 000, որից հետո, քարտապանի նույնականացման համար բավարար հիմքերի առկայության դեպքում, իրականացվում է քարտի ապակասեցում:

3.2.10 ՖԳԻԱՍ-ների կողմից առգրավված վճարային քարտերը տրամադրվում են քարտապաններին՝

3.2.10.1 եթե առգրավվել են Բանկի ԱԳՄ-ներում, քարտերի տրամադրումն իրականացվում է առգրավման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում

3.2.10.2 եթե առգրավվել են «Արքա» համակարգի անդամ բանկերի ԱԳՄ-ներում, քարտերի տրամադրումն իրականացվում է Բանկի Գլխամասային գրասենյակում՝ Բանկի կողմից քարտերը ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում,

3.2.10.3 եթե առգրավվել են «Արքա» համակարգի անդամ չհանդիսացող բանկերի ԱԳՄ-ներում, քարտերի տրամադրումն իրականացվում է տվյալ բանկում գործող ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններով, և վերջինիս կողմից քարտի ոչնչացման համար Բանկը պատասխանատվություն չի կրում:



3.2.11 Բանկը պատասխանատվություն չի կրում այլ Բանկերի ԱԳՄ-ներում առգրավված վճարային քարտերի՝ հաճախորդներին տրամադրման համար :

3.2.12 Եթե հաճախորդը չի դիմում Բանկին վճարային քարտն առգրավվելուց հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, Բանկը կարող է ոչնչացնել առգրավված վճարային քարտը:

3.2.13 «Առգրավված քարտի տրամադրումը իրականացվում է քարտապանի կամ նրա լիազորված անձի՝ Բանկ ներկայանալու և նույնականացվելու դեպքում, ընդ որում, առանձին դեպքերում, Բանկի թույլտվությամբ, առգրավված վճարային քարտը կարող է տրամադրվել քարտապանին կամ նրա լիազորված անձին նաև առգրավում իրականացրած Բանկի կողմից:

3.2.14 Առգրավված քարտի տրամադրման անհնարինության դեպքում քարտապանը կարող է դիմել Բանկին վճարային քարտը վերաթողարկելու համար:

3.3 Քարտի տրամադրում և ակտիվացում

3.3.1 Վճարային քարտի տրամադրումն իրականացվում է վճարային քարտը և PIN ծրարը, (եթե տվյալ քարտատեսակի համար նախատեսված է PIN կոդը ծրարով տրամադրելու եղանակ), հաճախորդի կողմից ներկայացված հասցեով սուրհանդակային (փոստային) ծառայության միջոցով կամ Բանկի մասնաճյուղում: Հաճախորդն ընդունում է, որ հեռահար եղանակով Վճարային քարտի, կից քարտի թողարկման, վերաթողարկման դեպքում Վճարային քարտը Հաճախորդի կողմից տրված լիազորագրի հիման վրա այլ անձի հանձնվել չի կարող:

3.3.2 Դեբետային (հաշվարկային) քարտն ուղարկվում է հաճախորդի նշած հասցեով կամ հասանելի է դառնում Բանկի մասնաճյուղում Առաջարկ-դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո առավելագույնը 9 (ինը) աշխատանքային օրվա ընթացքում՝ Առաջարկ-դիմումի ակցեպտավորման դեպքում: Ընդ որում, եթե հաճախորդը սահմանել է վճարային քարտի թողարկման լրացուցիչ նախապայման (օրինակ՝ վարկային գծի տրամադրում), ապա սույն կետում նշված ժամկետը երկարաձգվում է համապատասխան որոշման կայացման համար սահմանված ժամկետի չափով: Հեռահար եղանակով Վճարային քարտի, կից քարտի թողարկման/վերաթողարկման դեպքում Վճարային քարտն Հաճախորդին ուղարկվում է Բանկի սակագներով սահմանված վճարներն իրականացնելուց հետո:

3.3.3 Վարկային քարտն ուղարկվում է հաճախորդի կողմից նշված հասցեով կամ Բանկի մասնաճյուղում հասանելի է դառնում Առաջարկ-դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո առավելագույնը 12 (տասներկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ Առաջարկ-դիմումի ակցեպտավորման դեպքում:

3.3.4 Սուրհանդակային (փոստային) ծառայությունը հաճախորդի բացակայության կամ անհասանելիության դեպքում վճարային քարտը և (կամ) PIN ծրարը վերադարձնում է Բանկին: Տվյալ դեպքում հաճախորդը պետք է կապվի Բանկի հետ (Հեռախոսային կենտրոն + 374 (60) 655 000) և տեղեկացնի վճարային քարտի կամ PIN ծրարի ստացման նախընտրելի տարբերակի վերաբերյալ, ընդ որում, հաճախորդը կարող է Բանկի սակագների համաձայն պատվիրել վճարային քարտի կամ PIN ծրարի կրկնակի առաքում կամ ստանալ դրանք Բանկի Գլխամասային գրասենյակից:

3.3.5 Կրկնակի առաքումն իրականացվում է հաճախորդի կողմից Բանկ զանգահարելուց հետո 9 (ինը) աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում, կրկնակի առաքման դեպքում հաճախորդի բացակայության դեպքում հետ վերադարձված վճարային քարտը և (կամ) PIN ծրարը ոչնչացվում է Բանկի կողմից:

3.3.6 Բանկի Գլխամասային գրասենյակում վճարային քարտը կամ PIN ծրարը հասանելի է ստացման համար հաճախորդի զանգից հետո հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվանից սկսած 1 (մեկ) ամսվա ընթացքում, որից հետո վճարային քարտը և PIN ծրարը (եթե տվյալ քարտատեսակի համար նախատեսված է PIN կոդը ծրարով տրամադրելու եղանակ) ոչնչացվում են:

3.3.7 Անվտանգության նկատառումներից ելնելով՝ վճարային քարտերը տրամադրվում են հաճախորդին կասեցված վիճակում, սակայն չանհատականացված քարտերը որոշ դեպքերում կարող են տրամադրվել նաև ակտիվ կարգավիճակով:

3.3.8 Վճարային քարտն ակտիվանում է հաճախորդի կողմից վճարային քարտը պարունակող ուղարկման ծրարը ստանալուց հետո՝ ծրարում նշված ակտիվացման համար անհրաժեշտ բոլոր քայլերը կատարելուց հետո առավելագույնը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3.9 Վճարային քարտի ակտիվացմանն ուղղված գործողություններ իրականացնելը հավաստում է հաճախորդի կողմից վճարային քարտը ստացված լինելու փաստը: Հաճախորդի կողմից քարտի ակտիվացումը համարվում է Հաճախորդի կողմից սույն կանոններին և քարտի սպասարկման այլ պայմաններին անվերապահ համաձայնություն:



3.3.10 Սույն կանոնների 3.2.13, 3.3.5, 3.3.6 կետերով նախատեսված վճարային քարտերի ոչնչացումից հետո քարտային հաշիվը շարունակում է գործել և փակվում է սույն կանոնների 4.12 կետով սահմանված կարգով:

4. Վճարային քարտերի օգտագործում եվ գործառնությունների տեսակներ

4.1 Քարտային գործառնություններ

4.1.1 Քարտապանին տրամադրված մի քանի վճարային քարտերով գործարքների հաշվառումը կարող է իրականացվել մեկ քարտային (բանկային) հաշվով:

4.1.2 Քարտապանը վճարային քարտով կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները (ընդ որում, գործառնությունների իրականացումը կարող է սահմանափակվել՝ քարտի տեսակից և (կամ) Բանկի հետ կնքված պայմանագրի պայմաններից կախված՝)

4.1.2.1 ՀՀ տարածքում և դրանից դուրս ՀՀ դրամով և արտարժույթով կանխիկ դրամական միջոցների ստացում (այդ թվում՝ ՖԳԻԱՍ-ների և կանխիկացման այլ կետերի միջոցով),

4.1.2.2 ՀՀ տարածքում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների, մտավոր աշխատանքի արդյունքների) դիմաց ՀՀ արժույթով, իսկ ՀՀ տարածքից դուրս (իսկ ՀՀ օրենսդրությամբ չարգելված դեպքերում՝ նաև ՀՀ տարածքում)՝ նաև արտարժույթով վճարում (այդ թվում՝ տերմինալների, ՖԳԻԱՍ-ների, այլ բանկային սարքավորումների միջոցով, ինչպես նաև ինտերնետ միջավայրում),

4.1.2.3 Դրամական միջոցների փոխանցում, այդ թվում՝ ՀՀ դրամով և արտարժույթով:

4.1.2.4 ՀՀ արժույթով և արտարժույթով այլ գործառնություններ, եթե դրանց կատարման համար օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանափակումներ նախատեսված չեն:

4.1.3 Քարտապանը դեբետային/հաշվարկային կամ վարկային քարտերով կարող է իրականացնել 4.1.2 կետում նշված գործառնությունները ՀՀ արժույթով և (կամ) արտարժույթով բացված բանկային հաշիվներով:

4.1.4 Քարտապանն իրեն տրամադրված վճարային քարտով կարող է իրականացնել գործառնություններ՝ քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով, օրենքով, սույն կանոններով և համապատասխան պայմանագրերով սահմանված պայմաններով և կարգով՝ Բանկի կողմից արժույթի փոխարկման արդյունքում ստացված արժույթը փոխանցելով ըստ նպատակի՝ առանց քարտապանի հաշվին մուտքագրման:

4.1.5 Քարտապանը վճարային քարտով գործառնություններն իրականացնում է վճարային սահմանաչափի սահմաններում:

4.1.6 Բանկը վճարային քարտով գործառնությունների համար կարող է սահմանել համապատասխան հավաստագրման սահմանաչափեր՝ վճարային քարտերով գործառնությունների իրականացման գործառնական ռիսկերը զսպելու նպատակով: Տարբեր քարտատեսակների և գործառնությունների համար սահմանվող հավաստագրման սահմանաչափերը սահմանված են Բանկի սակագներում: Նման դեպքերում Քարտապանը վճարային սահմանաչափի ներքո վճարային քարտով գործառնությունները պետք է իրականացնի նաև Բանկի կողմից սահմանված հավաստագրման սահմանաչափերի սահմաններում, բացառությամբ սույն կանոնների 10.2.7.1 ենթակետի:

4.1.7 Բանկի սակագներով նախատեսված հավաստագրման սահմանաչափերը կարող են նախատեսվել մեկ գործարքի, ընդհանուր գործարքների և կանխիկի ստացման առավելագույն չափերի, կանխիկ գործարքների քանակի գծով՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան կտրվածքով կամ այլ պարբերականությամբ:

4.1.8 Վճարային քարտով կատարված և (կամ) հավաստագրված գործառնությունների արտացոլումը Քարտային հաշվին իրականացվում է վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան և սահմանված ժամկետներում ստացված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա, ինչը համարվում է Քարտապանի կողմից Քարտային հաշվին դրամական միջոցների մուտքագրման կամ ելքագրման վերաբերյալ Բանկին տրված հանձնարարական:

4.2 Կանխիկացման և կանխիկի մուտքագրման գործառնություններ

4.2.1 Քարտապանը կանխիկացման գործառնությունները կարող է իրականացնել համապատասխան ՖԳԻԱՍ-ների, կանխիկացման կետերի (բանկերում տեղադրված տերմինալների) միջոցով՝ տվյալ կանխիկացման կետի կողմից տվյալ վճարահաշվարկային համակարգի քարտերի ընդունման պարագայում, ինչպես նաև՝ Բանկի դրամարկղերի միջոցով:

4.2.2 Քարտապանը ՖԳԻԱՍ-ների միջոցով կարող է կանխիկացման գործառնություններ իրականացնել ինչպես Բանկի ՖԳԻԱՍ-ներում կամ կանխիկացման կետերում, այնպես էլ՝ տվյալ վճարահաշվարկային համակարգի քարտերը (կամ դրանց տեսակները) սպասարկող ցանկացած այլ բանկի ՖԳԻԱՍ-ներում կամ կանխիկացման կետերում:



4.2.3 Քարտապանը կանխիկի մուտքագրման գործառնությունները կարող է իրականացնել տվյալ վճարահաշվարկային համակարգի քարտերը (կամ դրանց տեսակները) սպասարկող և կանխիկի մուտքագրման հնարավորություն ունեցող ՖԳԻԱՍ-ների և բանկերի դրամարկղերի միջոցով:

4.2.4 Դրամական միջոցների կանխիկացման և (կամ) կանխիկի մուտքագրման համար Բանկը սահմանում է միջնորդավճարներ՝ Բանկի սակագներին համապատասխան:

4.2.5 Կանխիկացման գործառնություններ իրականացնելիս՝ դրամական միջոցների կանխիկացման միջնորդավճարը կարող է հաշվարկվել և գումարվել պահանջվող գումարին հավաստագրման հարցում իրականացնելիս, ընդ որում, տվյալ դեպքում գործարքի իրականացումը կարող է մերժվել, եթե պահանջվող գումարի և դրա միջնորդավճարի հանրագումարը գերազանցում է հավաստագրման կամ վճարային սահմանաչափերը:

4.2.6 Այլ բանկերի ՖԳԻԱՍ-ներում կամ կանխիկացման կետերում կանխիկացման գործարքներ իրականացնելիս գործարքը սպասարկող բանկը կարող է սահմանել կանխիկացման լրացուցիչ միջնորդավճարներ և արտարժույթի առավանգառքի փոխարժեքներ:

4.2.7 Բանկը պատասխանատվություն չի կրում այլ բանկերի ՖԳԻԱՍ-ների և (կամ) կանխիկացման կետերի միջոցով կանխիկացման գործառնությունների համար գանձված լրացուցիչ միջնորդավճարների համար:

4.2.8 Բանկը, հաճախորդի դիմումի համաձայն, կարող է իրականացնել գանձված լրացուցիչ միջնորդավճարի բողոքարկում, եթե քարտապանը պատշաճ կերպով չի տեղեկացվել սպասարկող բանկի կողմից լրացուցիչ միջնորդավճար գանձելու վերաբերյալ:

4.2.9 Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով ՖԳԻԱՍ-ների կամ կանխիկացման կետերի միջոցով կատարված գործառնությունների դեպքում Բանկը սույն կանոններով սահմանված կարգով իրականացնում է արտարժույթի առք ու վաճառք:

4.2.10 ՖԳԻԱՍ-ների կամ կանխիկացման կետերի միջոցով իրականացված կանխիկացման վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրումը Բանկ և դրանց հիման վրա դրամական միջոցների ելքագրումը քարտային հաշվից կատարվում է առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, կանխիկի մուտքագրման գործառնությունների դեպքում վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրումը Բանկ և դրանց հիման վրա կանխիկի մուտքագրումը կատարվում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը պատասխանատվություն չի կրում իր առջև պարտավորությունների կատարման ժամանակ սույն կետում նշված ժամանակահատվածը քարտապանի կողմից հաշվի չառնելու հետևանքով քարտապանի կողմից կրած վնասների համար:

4.2.11 Քարտապանի քարտային հաշվին կանխիկ մուտքագրված գումարը վճարային քարտի վրա ակտիվանում է գործառնությունը կատարելուց առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Անկանխիկ վճարումներ քարտերով

4.3.1 Քարտապանը վճարային քարտերով անկանխիկ վճարումներ կարող է իրականացնել վճարային տերմինալների, ՖԳԻԱՍ-ների միջոցով, ինտերնետ միջավայրում՝ վիրտուալ տերմինալների միջոցով և սմարթֆոնների միջոցով, եթե դրանք օժտված են տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններին համապատասխան վճարային քարտերի միջոցով վճարումներ ընդունելու հնարավորությամբ:

4.3.2 Տերմինալների միջոցով իրականացվող անկանխիկ վճարումները կարող են իրականացվել ինչպես գանձապահի օգնությամբ, այնպես էլ՝ ինքնասպասարկման տերմինալների միջոցով:

4.3.3 Տերմինալների միջոցով անկանխիկ գործառնությունները կարող են իրականացվել ինչպես էլեկտրոնային, այնպես էլ՝ մեխանիկական տերմինալների (իմպրինտերների) միջոցով:

4.3.4 Անկանխիկ վճարումների իրականացման դեպքում գործարքի թույլտվությունը հաճախորդի կողմից կարող է տրվել PIN կոդի մուտքագրման, առևտրային անդորրագրի ստորագրման միջոցով, QR-կոդի ընթերցման և Բանկի մոբայլ հավելվածի ծածկագրի մուտքագրման, կամ բիոմետրիկ տվյալի կիրառման միջոցով կամ ոչ երեսու առ երեսու գործառնությունների դեպքում CVC2/CVV2 կոդի մուտքագրման և SMS-հաղորդագրությամբ կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով ստացված ծածկագրի մուտքագրման, կամ համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից 3DS համակարգի համար նախատեսված այլ եղանակներով, կամ գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով, կամ քարտի թվայնացված կրկնորինակով (թղթենով):

4.3.5 Անկանխիկ վճարումները կարող են իրականացվել քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով՝ դրանց կատարման երկրի օրենսդրության համաձայն: Բանկը տվյալ դեպքում իրականացնում է սույն Կանոններով սահմանված կարգով արտարժույթի առք ու վաճառք:

4.3.6 Երեսու առ երեսու անկանխիկ գործառնությունների իրականացման ժամանակ գանձապահը կարող է պահանջել անձը հաստատող փաստաթղթի ներկայացում:



4.3.7 Անկանխիկ վճարումների դեպքում, Հաճախորդի քարտային հաշվից ելքագրման գործարքները որպես կանոն ձևակերպվում են պրոցեսինգային ընկերության կողմից գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

4.4 Մնացորդի հարցման գործառնություններ

4.4.1 Բանկի ՖԳԻԱՍ-ների միջոցով քարտապանին հասանելի է մնացորդի հարցման ծառայությունը:

4.4.2 Մնացորդի հարցման ծառայությունը կարող է հասանելի չլինել այլ բանկերի ՖԳԻԱՍ-ներից և կանխիկացման կետերից օգտվելիս:

4.5 Քարտային գործառնությունների հաշվանցման համար կիրառվող արտարժույթի փոխարժեք

4.5.1 Որպես հաշվանցման փոխարժեքներ սույն գլխում նկարագրված գործարքների համար կիրառվում է պրոցեսինգային կենտրոնում փոխհաշվարկի իրականացման նախորդ օրը Բանկի կողմից տրամադրված վերջին փոխարժեքները

4.5.2 Բանկի Visa International, MasterCard Worldwide, Armenian Card վճարահաշվարկային համակարգերի վճարային քարտերով Բանկի սպասարկման կետերում և ՖԳԻԱՍ-ներում գործարքների հաշվանցում կատարելիս արտարժույթի փոխարժեքի կիրառման կարգը հետևյալն է (ըստ գործարքների տեսակների, Քարտային հաշվի արժույթի և կիրառվող փոխարժեքների)՝

4.5.2.1. Եթե Քարտային հաշվի արժույթը ՀՀ դրամ է՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ	Այլ արժույթ
Վճարային քարտով Քարտային հաշվից ելքային գործարք	Փոխարկում չի իրականացվում	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի՝ տվյալ արտարժույթի վաճառքի փոխարժեք
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Փոխարկում չի իրականացվում	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի՝ տվյալ արտարժույթի առքի փոխարժեք
Հետադարձ գործարքներ (reversal) և հետգանձումներ (chargeback)	Փոխարկում չի իրականացվում	Առաջնային (բուն) գործարքի ժամանակ կիրառված փոխարժեքի գործարքի կատարման օրվա դրությամբ՝ տվյալ արտարժույթի համար սահմանված տվյալ օրվա հակադարձ փոխարժեք (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)

4.5.2.2. Եթե Քարտային հաշվի արժույթ է հանդիսանում արտարժույթը՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ	Այլ արժույթ	Քարտային հաշվի արժույթ
Վճարային քարտով Քարտային հաշվից ելքային գործարք	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի առքի փոխարժեք	Գործարքի արժույթի նկատմամբ Բանկի վաճառքի փոխարժեք և Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի առքի փոխարժեք	Փոխարկում չի իրականացվում
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի վաճառքի փոխարժեք	Գործարքի արժույթի նկատմամբ Բանկի առքի փոխարժեք և Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի վաճառքի փոխարժեք	Փոխարկում չի իրականացվում



Հետադարձ գործարքներ (reversal) և հետգանձումներ (chargeback)	Առաջնային (բուն) գործարքի ժամանակ կիրառված փոխարժեքների գործարքի կատարման օրվա դրությամբ՝ տվյալ արտարժույթի համար սահմանված տվյալ օրվա հակադարձ փոխարժեքներ (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)
---	--

4.5.3 Բանկի Visa International, MasterCard Worldwide, Armenian Card վճարահաշվարկային համակարգերի վճարային քարտերով ՀՀ տարածքում տվյալ վճարահաշվարկային համակարգերի մասով «Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային ծառայություններից օգտվող բանկերի սպասարկման կետերում (այդ թվում՝ կանխիկացման կետերում) և ՖԳԻԱՍ-ներում գործարքներ կատարելիս, գործարքների հաշվանցում կատարելիս՝ արտարժույթի փոխարժեքի կիրառման կարգը հետևյալն է (Սպասարկող բանկերի հետ փոխահաշվարկների իրականացման արժույթ է հանդիսանում ՀՀ դրամը)՝

4.5.3.1. Եթե Քարտային հաշվի արժույթը ՀՀ դրամ է՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ	Այլ արժույթ
Վճարային քարտով Քարտային հաշվից ելքային գործարք	Փոխարկում չի իրականացվում	Գործարքի արժույթի նկատմամբ՝ գործարքը սպասարկող բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված վաճառքի փոխարժեք
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Փոխարկում չի իրականացվում	Գործարքի արժույթի նկատմամբ՝ գործարքը սպասարկող բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված առքի փոխարժեք
Հետադարձ գործարքներ (reversal)	Առաջնային (բուն) գործարքի ժամանակ տվյալ արտարժույթի համար կիրառված փոխարժեք	
Հետգանձումներ (chargeback)	Գործարքի արժույթի նկատմամբ կիրառված փոխարժեքի հետգանձման մշակման օրվա դրությամբ տվյալ արտարժույթի համար սահմանված տվյալ օրվա հակադարձ փոխարժեք (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)	

4.5.3.2. Եթե Քարտային հաշվի արժույթ է հանդիսանում արտարժույթ՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ	Այլ արժույթ
Վճարային քարտով Քարտային հաշվից ելքային գործարք	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի առքի փոխարժեք	Գործարքի արժույթի նկատմամբ՝ գործարքը սպասարկող բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված վաճառքի փոխարժեք և Հաշվի արժույթի նկատմամբ՝ Բանկի առքի փոխարժեք
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի վաճառքի փոխարժեք	Գործարքի արժույթի նկատմամբ՝ գործարքը սպասարկող բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված առքի փոխարժեք և Հաշվի արժույթի նկատմամբ՝ Բանկի վաճառքի փոխարժեք
Հետադարձ գործարքներ (reversal)	Առաջնային (բուն) գործարքի ժամանակ գործարքի արժույթի նկատմամբ կիրառված փոխարժեք և հաշվի արժույթի նկատմամբ կիրառված փոխարժեքի (առկայության դեպքում) հակադարձ փոխարժեք (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)	



Հետգանձումներ (chargeback)	Գործարքի արժույթի նկատմամբ գործարքը սպասարկող բանկի կողմից հետգանձման մշակման օրվա դրությամբ սահմանված փոխարժեք և հաշվի արժույթի նկատմամբ կիրառված փոխարժեքի (առկայության դեպքում) հետգանձման մշակման օրվա դրությամբ սահմանված հակադարձ փոխարժեք (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)
----------------------------	---

4.5.4 Բանկի MasterCard Worldwide վճարահաշվարկային համակարգերի վճարային քարտերով այլ բանկերի (բացառությամբ սույն կանոնների 4.5.3 կետով սահմանված բանկերի) սպասարկման կետերում (այդ թվում՝ կանխիկացման կետերում) և ՖԳԻԱՍ-ներում գործարքների հաշվանցում կատարելիս արտարժույթի փոխարժեքի կիրառման կարգը հետևյալն է. սպասարկող բանկերի և MasterCard Worldwide վճարահաշվարկային համակարգի հետ փոխհաշվարկների իրականացման արժույթ է հանդիսանում ԱՄՆ դոլարը:

4.5.4.1. Եթե Քարտային հաշվի արժույթը ՀՀ դրամ է՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արժույթ
Վճարային քարտով Քարտային հաշվից ելքային գործարք	Փոխարկում չի իրականացվում	ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք	Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide -ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Փոխարկում չի իրականացվում	ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք	Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide -ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք
Հետադարձ գործարքներ (reversal)		Առաջնային (բուն) գործարքի ժամանակ կիրառված գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide -ի համապատասխան փոխարժեք և հետադարձ գործարքի մշակման օրվա դրությամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված փոխարժեքների հակադարձ փոխարժեքներ (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք),	
Հետգանձումներ (chargeback)		Հետգանձման մշակման օրվա դրությամբ Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide -ի համապատասխան փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված տվյալ օրվա փոխարժեքների հակադարձ փոխարժեքներ (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)	

4.5.4.2. Եթե Քարտային հաշվի արժույթը ԱՄՆ դոլար է՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արժույթ
-----------------------------------	---------	-----------	-------------



Վճարային քարտով Քարտային հաշվից ելքային գործարք	Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide-ի ԱՄՆ դոլարի փոխարժեք	Փոխարկում չի իրականացվում	Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide -ի՝ կողմից USD համար սահմանված փոխարժեք
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard-ի համապատասխան փոխարժեք	Փոխարկում չի իրականացվում	Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide -ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք
Հետադարձ գործարքներ (reversal)	Առաջնային (բուն) գործարքի ժամանակ կիրառված Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide -ի համապատասխան փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից հետադարձ գործարքի մշակման ժամանակ կիրառված փոխարժեքի հակադարձ փոխարժեք (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)		
Հետգանձումներ (chargeback)	Հետգանձման մշակման օրվա դրությամբ Գործարքի արժույթի նկատմամբ MasterCard Worldwide -ի համապատասխան փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից տվյալ օրվա սահմանված փոխարժեքի հակադարձ փոխարժեք (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)		

4.5.5 Բանկի Visa International վճարահաշվարկային համակարգերի վճարային քարտերով այլ բանկերի (բացառությամբ սույն Կանոնների 4.5.3 կետով սահմանված բանկերի) սպասարկման կետերում (այդ թվում՝ կանխիկացման կետերում) և ՖԳԻԱԱ-ներում գործարքներ կատարելիս գործարքների հաշվանցում կատարելիս արտարժույթի փոխարժեքի կիրառման կարգը հետևյալն է (Սպասարկող բանկերի հետ փոխհաշվարկների իրականացման արժույթներն են ԱՄՆ դոլարը և Եվրոն)՝

4.5.5.1. Եթե Քարտային հաշվի արժույթը ՀՀ դրամ է՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթ
Վճարային քարտով Քարտային հաշվից ելքային գործարք	Փոխարկում չի իրականացվում	ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք	Եվրոյի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք	Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի կողմից ԱՄՆ դոլարի համար սահմանված փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի վաճառքի փոխարժեք
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Փոխարկում չի իրականացվում	ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք	Եվրոյի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք	Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի առքի փոխարժեք
Հետադարձ գործարքներ (reversal)	Առաջնային (բուն) գործարքի ժամանակ կիրառված Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք և ԱՄՆ դոլարի կամ Եվրոյի (գործարքի արժույթից կապված) նկատմամբ Բանկի կողմից հետադարձ գործարքի մշակման ժամանակ սահմանված փոխարժեքի հակադարձ փոխարժեք (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)			



Հետգանձումներ (chargeback)	Հետգանձման գործարքի մշակման օրվա դրությամբ Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար տվյալ օրվա սահմանված փոխարժեք և ԱՄՆ դոլարի կամ Եվրոյի (գործարքի արժույթից կապված) նկատմամբ Բանկի կողմից սահմանված փոխարժեքի հակադարձ փոխարժեք (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)
----------------------------	--

4.5.5.2. Եթե Քարտային հաշվի արժույթը ԱՄՆ դոլար է՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ կամ այլ արժույթ	ԱՄՆ դոլար	Եվրո
Վճարային քարտով Քարտային հաշվից Ելքային գործարք	Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի կողմից ԱՄՆ դոլարի համար սահմանված փոխարժեք	Փոխարկում չի իրականացվում	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք և Եվրոյի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք	Փոխարկում չի իրականացվում	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք և Եվրոյի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք
Հետադարձ գործարքներ (reversal)	Առաջնային (բուն) գործարքի ժամանակ կիրառված Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք և ԱՄՆ դոլարի կամ Եվրոյի (կապված գործարքի արժույթից) նկատմամբ հետադարձ գործարքի մշակման ժամանակ Բանկի կողմից սահմանված փոխարժեքների հակադարձ փոխարժեքներ (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)		
Հետգանձումներ (chargeback)	Հետգանձման գործարքի մշակման օրվա դրությամբ Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված տվյալ օրվա փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված փոխարժեքների հակադարձ փոխարժեքներ (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)		

4.5.5.3. Եթե Քարտային հաշվի արժույթը Եվրո է՝

Գործարքի արժույթ / Գործարքի տեսակ	ՀՀ դրամ կամ այլ արժույթ	ԱՄՆ դոլար	Եվրո
Վճարային քարտով Քարտային հաշվին Ելքային գործարք	Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք, հաշվի արժույթի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք	Փոխարկում չի իրականացվում



	կողմից սահմանված վաճառքի փոխարժեք		
Վճարային քարտով Քարտային հաշվին մուտքային գործարք	Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք, հաշվի արժույթի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք	Հաշվի արժույթի նկատմամբ Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեք	Փոխարկում չի իրականացվում
Հետադարձ գործարքներ (reversal)	Առաջնային (բուն) գործարքի ժամանակ կիրառված Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք և հետադարձ գործարքի մշակման ժամանակ ԱՄՆ դոլարի կամ Եվրոյի (կապված գործարքի արժույթից) նկատմամբ Բանկի կողմից սահմանված փոխարժեքների հակադարձ փոխարժեքներ (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)		
Հետգանձումներ (chargeback)	Հետգանձման գործարքի մշակման օրվա դրությամբ Գործարքի արժույթի նկատմամբ Visa International-ի՝ տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեք և ԱՄՆ դոլարի նկատմամբ Բանկի կողմից սահմանված փոխարժեքների տվյալ օրվա հակադարձ փոխարժեքներ (առքի դեպքում՝ վաճառք, վաճառքի դեպքում՝ առք)		

4.5.6 Բանկը սույն Կանոնների 4.5.2, 4.5.3, 4.5.4, 4.5.5 և 4.5.6 կետերով նախատեսված փոխարկումների ժամանակ ՀՀ դրամի փոխարժեքի փոփոխման ռիսկեր կրելու դեպքում իր հայեցողությամբ կարող է նշված փոփոխումից բխող ռիսկերը փոխանցել քարտապանին՝ Քարտային հաշվից անակցեպտ ելքագրելով փոխարժեքի փոփոխման արդյունքում առաջացած ֆինանսական կորստին համարժեք գումարներ:

4.5.7 «Թեյ-Սեյ»-ՓԲԸ-ի ՖԳԻԱՍ-ներից Քարտային հաշվին մուտքային գործարքների կատարման ժամանակ կիրառվում է տվյալ օրվա դրությամբ Քարտային հաշվի արժույթի նկատմամբ Բանկի կողմից սահմանված արտարժույթի վաճառքի փոխարժեքը (եթե Քարտային հաշվի արժույթը տարբերվում է ՀՀ դրամից):

4.5.8 Քարտային հաշվից ներբանկային կամ միջազգային փոխանցումներ, առանց քարտի առկայության կանխիկացումներ, Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով իրականացված դրամական միջոցների մուտքային գործարքներ, ինչպես նաև՝ Պայմանագրով սահմանված առանց վճարային քարտի օգտագործման այլ գործառնությունների իրականացման ժամանակ կիրառվում են գործարքի՝ Քարտային հաշվին հաշվանցման օրվա դրությամբ Բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված արժույթների վաճառքի և (կամ) առքի փոխարժեքներ:

4.5.9 Քարտային հաշվից Պայմանագրով սահմանված բոլոր միջնորդավճարները գանձվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

4.5.10 Visa International և MasterCard Worldwide վճարահաշվարկային կազմակերպությունների վճարային քարտերով կատարված բոլոր այն գործարքների համար, որոնք ենթադրում են կազմակերպության կողմից սահմանված փոխարժեքներով արժույթի փոխարկում, գործարքի գումարին գումարվում է գործարքի գումարի 2 (երկու) %-ի չափով միջնորդավճար:

4.6 Վճարումներ վիրտուալ միջավայրում

4.6.1 Բանկի վճարային քարտերը թույլ են տալիս քարտապաններին իրենց վճարային քարտը (ներառյալ դրա վավերապայմանները) օգտագործել նաև վիրտուալ միջավայրում՝ ինտերնետում:




4.6.2 Վճարային քարտերը (ներառյալ դրանց ռեկվիզիտները) ինտերնետում օգտագործվում են կամ 3D Secure անվտանգության համակարգի կիրառմամբ, Բանկի կողմից թողարկված քարտերով համացանցում հնարավոր է իրականացնել առանց 3D Secure համակարգի օգտագործման գործարքներ միայն այն դեպքում, երբ սպասարկող կայքը պաշտպանված չէ 3D Secure համակարգով:

4.6.3 3D Secure անվտանգության համակարգի կիրառմամբ հնարավոր է կատարել գործարքներ վիրտուալ միջավայրում Բանկի կողմից թողարկվող բոլոր միջազգային վճարահաշվարկային համակարգերի (Visa International, MasterCard Worldwide) վճարային քարտերի միջոցով, եթե դրանց քարտապաններն ունեն Բանկում գրանցված բջջային հեռախոսահամար, որի համար պրոցեսինգային կենտրոնում ակտիվացված է SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունը և տվյալ քարտատեսակը սպասարկվում է համապատասխան կայքի կողմից:

4.6.4 Այն հաճախորդներն, ովքեր չունեն Բանկի տեղեկատվական բազայում գրանցված բջջային հեռախոսահամար, չեն կարող օգտվել 3D Secure համակարգի միջոցով ինտերնետային գործարքներ իրականացնելու հնարավորությունից:

4.6.5 Ինտերնետ միջավայրում գործարքներ իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում, թույլատրվում է CVC2/CVV2 ծածկագրի մուտքագրումը, որը գտնվում է վճարային քարտի դարձերեսին և բաղկացած է երեք նիշից: Ընդ որում, դա կարող է տեղի ունենալ ինչպես այն դեպքում, երբ սպասարկող կայքը օգտագործում է 3D Secure համակարգը, այնպես էլ այն դեպքում, երբ սպասարկող կայքը այդ համակարգի միջոցով պաշտպանված չէ:

4.6.6 Ինտերնետ առևտրի կետերում գործարքներ իրականացնելիս՝ քարտապանին խորհուրդ է տրվում հավաստիանալ, որ տվյալ կայքում հրապարակված են Հաճախորդի շահերի պաշտպանության քաղաքականությունը և կազմակերպության կոնտակտային տվյալները (հնարավորության դեպքում դրանք պետք է ստուգել):

4.6.7 Ինտերնետ միջավայրում վճարային քարտը օգտագործելիս՝ քարտապանը պետք է ուշադրություն դարձնի զննարկիչի (browser) համապատասխան դաշտում «փականի նշանի» ( https) առկայության վրա, Secure Sockets Layer (SSL) կամ Secure Web Site գրառումները վկայում են այն մասին, որ միայն քարտապանը և առևտրի կետը հնարավորություն ունեն դիտելու վճարման մանրամասնությունները:

4.6.8 Ինտերնետ առևտրի կետերում գործարքների կատարման ժամանակ PIN ծածկագրի մուտքագրում չի պահանջվում և քարտապանը չպետք է մուտքագրի այն որևէ պատրվակով:

4.6.9 Ինտերնետ միջավայրում հաճախակի գործարքներ կատարելիս՝ քարտապանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի իր համակարգչում հակավիրուսային ծրագրերի առկայությանը, քանի որ վիրուսները կարող են տեղեկատվության արտահոսքի պատճառ լինել:

4.6.10 Եթե համապատասխան կայքը ունենա անհրաժեշտ տեխնիկական հագեցվածություն, Հաճախորդը ինտերնետ միջավայրում կարող է կատարել գործարքներ իր քարտի թվայնացված կրկնորինակով (թրքենով):

4.7 Քարտից քարտ փոխանցումներ

4.7.1 Հաճախորդները կարող են վճարային քարտերով իրականացնել քարտից քարտ փոխանցումներ) վճարային քարտերով բանկի՝ համապատասխան հնարավորություններով օժտված ՖԳԻԱԱ-ների, Բանկի մոբայլ հավելվածի, պաշտոնական կայքի և այլ բանկերի կողմից համապատասխան վճարահաշվարկային համակարգերի պահանջներին համապատասխան ստեղծված համացանցում գործող տերմինալների միջոցով:

4.8 Այլ ոչ երես առ երես վճարումներ

4.8.1 Այլ, ոչ երես առ երես գործառնությունները, այդ թվում՝ փոստային կամ հեռախոսային պատվերները (Mail Order, Phone Order) իրականացվում են վճարային քարտերի վավերապայմանների կիրառմամբ և քարտապանի կողմից տրված հանձնարարականի հիման վրա:

4.8.2 Փոստային կամ հեռախոսային պատվերի գործառնությունների դեպքում թույլատրվում է CVC2/CVV2 ծածկագրի և վճարային քարտի այլ վավերապայմանների տրամադրումը (բացառությամբ PIN ծածկագրի) առևտրի կամ սպասարկման կետին:

4.8.3 Փոստային կամ հեռախոսային պատվերի գործառնությունների դեպքում PIN ծածկագրի մուտքագրում չի պահանջվում, և քարտապանը չպետք է տրամադրի այն որևէ պատրվակով:

4.9 Վճարային քարտի կորուստ

4.9.1 Վճարային քարտի կորուստի կամ հափշտակման դեպքում քարտապանը պարտավոր է վճարային քարտով հավաստագրումների կասեցման նպատակով անմիջապես տեղեկացնել՝

4.9.1.1 Բանկին՝ Հեռախոսային կենտրոնի շուրջօրյա հեռախոսահամարով՝ +374 (60) 655 000 կամ



4.9.1.2 Պրոցեսինգային ընկերությանը՝ +374 10 592222 հեռախոսահամարով՝ շուրջօրյա կամ

4.9.1.3 Վճարահաշվարկային համակարգին, արտասահմանում լինելու և Բանկի կամ Պրոցեսինգային ընկերության անհասանելիության դեպքում, Visa քարտերի համար՝ +1(410) 581-99-94 կամ +1(410) 581-38-36, MasterCard քարտերի համար՝ +1-800-627-8372 (ԱՄՆ-ում) +1-636-722-7111 (ԱՄՆ-ից դուրս) շուրջօրյա: Ընդ որում, վճարահաշվարկային համակարգին տեղեկացնելուց հետո, քարտապանը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում փորձի կապվել Բանկի հետ:

4.9.2 Բանկի, Պրոցեսինգային ընկերության կամ Վճարահաշվարկային համակարգի ծրագրային համակարգերում վճարային քարտով հավաստագրման կասեցումը չի նշանակում, որ կորցված վճարային քարտի (ներառյալ դրա վավերապայմանների) օգտագործումը լիովին կասեցված է: Տվյալ դեպքում կասեցվում են միայն հավաստագրման ենթակա գործառնությունները և քարտապանը կարող է ֆինանսական կորուստներ ունենալ այն գործառնությունների արդյունքում, որոնք ենթակա չեն հավաստագրման, չնայած այն փաստին, որ թույլատրված չհավաստագրված գործառնությունները հազվադեպ են իրականացվում և ունեն գումարային սահմանափակումներ՝ կապված երկրից և գործառնությունների տեսակից:

4.9.3 Վճարային քարտի օգտագործումը ամբողջովին կասեցնելու համար քարտապանը պարտավոր է Բանկին, Պրոցեսինգային ընկերությանը կամ Վճարահաշվարկային համակարգին տեղեկացնել, որ բացի հավաստագրման կասեցումից, ցանկանում է օգտվել նաև Stop-list ծառայությունից:

4.9.4 Վճարային քարտով հավաստագրումների կասեցումը և Stop-list ցանկում տեղադրումը իրականացվում է Բանկի սակագների համաձայն:

4.9.5 Վճարային քարտի կորստի կամ հափշտակման դեպքում, հավաստագրումների կասեցում իրականացնելուց և Stop-list ծառայությունից չօգտվելու դեպքում քարտապանը կրում է առանց հավաստագրման իրականացման կատարված բոլոր գործարքների հետևանքով առաջացած բացասական հետևանքների ռիսկը՝ անկախ մեղքի բացակայությունից, իսկ Բանկը պատասխանատվություն է կրում հավաստագրման հարցմամբ իրականացված բոլոր գործարքների համար:

4.9.6 Վճարային քարտի տեղադրումը Stop-list-ում իրականացվում և վավերացվում է միջազգային վճարահաշվարկային համակարգերի կանոններին համաձայն:

4.9.7 Վճարային քարտով հավաստագրումների ապակասեցման և վճարային քարտը Stop-list-ից հեռացնելու նպատակով քարտապանը պարտավոր է դիմել Բանկին:

4.9.8 Վճարային քարտով հավաստագրումների ապակասեցումն իրականացվում է Բանկի սակագներին համապատասխան:

4.9.9 Վճարային քարտի կորստի կամ հափշտակման դեպքում քարտապանը կարող է դիմել Բանկին՝ փոփոխված վավերապայմաններով վճարային քարտ վերաթողարկելու նպատակով:

4.9.10 Վճարային քարտի վերաթողարկումն իրականացվում է Բանկի սակագներին համապատասխան՝ դիմումը ստանալուց հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում:

4.10 Վճարային քարտի վավերականության ժամկետ

4.10.1 Վճարային քարտի վավերականության ժամկետը նշվում է վճարային քարտի դարձերեսին հետևյալ ֆորմատով ԱԱ/ՏՏ (ամիս/տարի), ինչը նշանակում է որ վճարային քարտը վավեր է մինչև տվյալ տարվա տվյալ ամսվա վերջին օրացուցային օրը:

4.10.2 Վճարային քարտը վավեր է միայն վավերականության ժամկետների սկզբի և ավարտի միջև ընկած ժամանակահատվածում:

4.10.3 Բանկը վճարային քարտի վավերականության ժամկետի ավարտից 2 (երկու) ամիս առաջ կարող է ինքնաշխատ կերպով իրականացնել վճարային քարտի ժամկետային վերաթողարկում: Ընդ որում վերաթողարկման ենթակա են վերաթողարկման պահին գործող կարգավիճակ ունեցող և չկասեցված վճարային քարտերը: Եթե վճարային քարտի ժամկետային վերաթողարկման պահին տվյալ քարտատեսակը Բանկի կողմից այլևս չի թողարկվում, ապա Բանկը քարտապանի համար կարող է թողարկել այլ վճարային քարտ, որը հնարավորինս համարժեք է վերաթողարկման ենթակա վճարային քարտի տեսակին, պայմաններին:

4.10.4 Բանկը վճարային քարտի վավերականության ժամկետի ավարտի դեպքում ինքնաշխատ կերպով իրականացնում է վճարային քարտի ժամկետային վերաթողարկում, եթե տվյալ քարտատեսակի տրամադրման և սպասարկման սակագներով և պայմաններով այլ բան նախատեսված չէ, հետևյալ դեպքերում.

4.10.4.1 Դեբետային (հաշվարկային) քարտերի համար՝

- Վճարային քարտի վերաթողարկման որոշումը կայացնելու ամսվան նախորդող 12 (տասներկու) ամիսների ընթացքում առկա է քարտային հաշվով կատարված դեբետային կամ կրեդիտային (բացառությամբ տոկոսների վճարման գործարքի) առնվազն մեկ գործարք (կամ),



- Եթե քարտի գործողության ժամկետի ավարտին նրան կցված է գործող վարկային գիծ:

4.10.4.2 Վարկային քարտերի համար՝

- Եթե Վարկային քարտին կցված գործող վարկային գծի ժամկետը գերազանցում է վճարային քարտի ժամկետի ավարտը:

4.10.5 Եթե քարտապանը չի ցանկանում վերաթողարկել իր վճարային քարտը, նա պարտավոր է վճարային քարտի վավերականության ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ տեղեկացնել այդ մասին Բանկին: 4.10.3 կետով սահմանված դեպքում վճարային քարտի թողարկման կամ թողարկված քարտով սպասարկվելու մասին քարտապանի կողմից Բանկին սույն Կանոններով նշված կարգով անհամաձայնություն չհայտնելու դեպքում Բանկի և Քարտապանի միջև հարաբերությունները շարունակվում են Պայմանագրով և սույն Կանոններով սահմանված կարգով:

4.10.6 Եթե քարտապանը վճարային քարտի վերաթողարկումն իրականացնելուց հետո 3 (երեք) ամսվա ընթացքում չի դիմում Բանկին վճարային քարտը ստանալու համար, ապա Բանկը կարող է ոչնչացնել վերաթողարկված քարտը:

4.10.7 Այն վճարային քարտերը, որոնց վավերականության ժամկետները լրացել են, ենթակա են ոչնչացման հաճախորդի կողմից:

4.10.8 Քարտապանը լրիվ ծավալով պատասխանատվություն է կրում վավերականության ժամկետը լրացած և իր կողմից չոչնչացված վճարային քարտերի կամ դրանց վավերապայմանների զեղծարար օգտագործումից բխող ֆինանսական կորուստների համար՝ անկախ մեղքի բացակայությունից:

4.11 Քարտային հաշվին առկա մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք

4.11.1 Բանկն օրական հաշվարկում է հաճախորդի քարտային հաշվին առկա մնացորդի դիմաց պարզ (անվանական) տոկոսադրույք՝ համաձայն Բանկում գործող սակագների, ընդ որում, Վճարային քարտով կամ դրա վավերապայմանների կիրառմամբ կատարված, սակայն փաստացի չհաշվանցված գործարքների առկայության դեպքում, մինչև փաստացի հաշվանցումն ընկած ժամանակահատվածի համար տոկոսագումարը հաշվարկվում է գործարքի կատարման արդյունքում ձևավորված մնացորդի նկատմամբ:

4.11.2 Հաշվարկված տոկոսագումարի վճարումը իրականացվում է եռամսյակը մեկ անգամ, իսկ քարտային հաշվի փակման դեպքում չվճարված տոկոսագումարները՝ փակման օրը:

4.12 Վճարային քարտի և քարտային հաշվի փակում

4.12.1 Վճարային քարտի փակումն իրականացվում է քարտապանի Բանկի կողմից սահմանված եղանակով ներկայացված դիմումի համաձայն, կամ վճարային քարտի ժամկետի ավարտի և վերաթողարկման ենթակա չլինելու դեպքում սույն Կանոններով սահմանված կարգով և/կամ Բանկի սակագներով սահմանված դեպքում: Վճարային քարտի փակման համար քարտապանը կարող է դիմել Բանկին նաև հեռախոսազանգի միջոցով՝ զանգահարելով Բանկի Հեռախոսային կենտրոն՝ +374 (60) 655 000: Վճարային քարտի փակման համար հեռախոսազանգով դիմելու պարագայում քարտապանի նույնականացման բավարար հիմքերի առկայության դեպքում իրականացվում է վճարային քարտի փակում:

4.12.2 Քարտային հաշվի փակումը և Պայմանագրի լուծումն իրականացվում է քարտապանի Բանկի կողմից սահմանված եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կամ քարտապանի կողմից հեռախոսազանգի միջոցով դիմելու դեպքում սույն Կանոնների 12.1.4, 12.1.5 կետերով սահմանված կարգով կամ կարող է իրականացվել միակողմանի՝ Բանկի նախաձեռնությամբ Բանկի սակագներով սահմանված կարգով, ինչպես նաև Կանոնների 10.1.18 կետով ստանձնած պարտավորությունները քարտապանի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում:

4.12.3 Քարտապանի կողմից հեռախոսազանգի միջոցով քարտային հաշվի փակման և Պայմանագրի լուծման համար Բանկին դիմելու պարագայում քարտապանի նույնականացման համար բավարար հիմքերի առկայության դեպքում իրականացվում է քարտային հաշվի փակում և Պայմանագրի լուծում: Նշված դեպքում քարտային հաշվին առկա հասանելի մնացորդը Քարտապանի համապատասխան հրահանգով կարող է փոխանցվել Քարտապանի կամ երրորդ անձի Բանկում սպասարկվող հաշվի: Ընդ որում՝ հասանելի մնացորդը քարտային հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթով հաշվին փոխանցման դեպքում փոխարկումն իրականացվում է տվյալ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով: Քարտային հաշվին առկա հասանելի մնացորդը Քարտապանի համապատասխան հրահանգով կարող է Բանկի եկամուտ ճանաչվել:

4.12.4 Հաշվին առկա հասանելի մնացորդը Բանկի եկամուտ ճանաչելու կամ այլ հաշվի փոխանցելու Հաճախորդի հրահանգի բացակայության դեպքում քարտային հաշիվը չի փակվում, Պայմանագիրը չի լուծվում:



4.12.5 Հեռախոսազանգի միջոցով հաշվին կցված վարկային գիծը (առկայության դեպքում) կարող է փակվել միայն տվյալ վարկային գծով պարտավորությունների բացակայության դեպքում:

4.13 Վճարային սահմանաչափի գերաժախս

4.13.1 Վճարային սահմանաչափի գերաժախսի համար Բանկի սակագներով սահմանվում է համապատասխան տույժ:

4.13.2 Վճարային սահմանաչափի գերաժախս կարող է առաջանալ առավելապես հետևյալ իրավիճակներում՝

4.13.2.1. Կանխկազման գործարքների իրականացում. գրեթե յուրաքանչյուր կանխկազման գործարք ենթադրում է կանխկազման միջնորդավճարի գանձում, որը հաշվարկվում է գործարքի իրականացումից հետո մեկ կամ մի քանի օր անց՝ կապված գործարքի հաշվանցման օրվանից: Եթե քարտապանի հաշվին առկա չէ օգտագործման համար բավարար հասանելի մնացորդ, միջնորդավճարի հաշվարկի արդյունքում առաջանում է վճարային սահմանաչափի գերաժախս:

4.13.2.2. Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքների իրականացում. Սովորաբար քարտային գործարքներն իրականացվում են երկու փուլով՝ քարտային հաշվին գումարի սառեցում, այնուհետև քարտային հաշվից գումարի ելքագրում (գործարքի հաշվանցում):

4.13.2.3. Եթե գործարքի արժույթը տարբերվում է քարտային հաշվի արժույթից, ապա սառեցումն իրականացվում է որոշակի փոխարժեքով: Այնուհետև, երբ մի քանի օր անց կատարվում է գումարի փաստացի գանձում (գործարքի հաշվանցում), փոփոխված փոխարժեքի արդյունքում փաստացի գանձվող գումարը կարող է լինել ավելի մեծ քան սառեցվածը, ինչը, իր հերթին, կարող է առաջացնել վճարային սահմանաչափի գերաժախս:

4.13.2.4. Չհավաստագրված գործարքների իրականացում. որոշ առևտրի կետերում գործարքներ իրականացնելիս չի կատարվում հավաստագրում, այսինքն ստուգում, թե՛ արդյոք քարտային հաշվին առկա են բավարար միջոցներ գործարքի իրականացման համար: Դրա հետևանքով չի կատարվում գումարի սառեցում, և չի երևում սառեցված (հավաստագրված), այսինքն քարտապանի կողմից փաստացի օգտագործված գումարը: Սակայն այն, որոշ ժամանակ անց (գործարքի ստացման և հաշվանցման ժամանակ), քարտային հաշվից ելքագրվելուց հետո, հասանելի մնացորդի բացակայության դեպքում, կգոյանա վճարային սահմանաչափի գերաժախս:

4.13.2.5. Տոկոսավճարի կուտակում. Եթե վճարային քարտին տրամադրվել է վարկային սահմանաչափ (վարկային կամ հաշվարկային քարտերի դեպքում), ապա ամսվա որոշակի օրերին՝ համաձայն Բանկի հետ կնքված պայմանագրի, վարկային գծի օգտագործված մասի դիմաց կկուտակվի տոկոսագումար և քարտային հաշվին հասանելի մնացորդի (այդ թվում՝ վարկի չօգտագործված մասի) բացակայության դեպքում կառաջանա վճարային սահմանաչափի գերաժախս:

4.13.2.6. Արտոնյալ սակագներով տրամադրված քարտեր. Եթե վճարային քարտը թողարկվել է արտոնյալ սակագների շրջանակներում (այդ թվում՝ աշխատավարձային նախագծի ներքո), և Բանկի որոշակի ծառայությունների համար քարտապանին տրամադրվել են արտոնություններ, ապա, Կանոններով նախատեսված դեպքերում վճարային քարտի ստանդարտ սակագներով սպասարկվելու դեպքում, որոշակի միջնորդավճարների գանձումը, կարող է բերել վճարային սահմանաչափի գերաժախսի:

4.13.2.7. Այլ միջնորդավճարներ. Վճարային քարտը օգտագործելիս քարտային հաշվից կարող են գանձվել սակագներով նախատեսված միջնորդավճարներ, տույժեր և տուգանքներ այդ թվում՝ քարտի տարեկան սպասարկման վարձ, SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով հաղորդագրությունների համար վճար և այլ միջնորդավճարներ: Քարտի հասանելի մնացորդի բացակայության պարագայում տվյալ գանձումները կարող են առաջ անցնել քարտային վճարային սահմանաչափի գերաժախս:

4.13.2.8. Վարկային սահմանաչափի նվազեցում. Եթե հաճախորդը Բանկին ներկայացրել է վարկային սահմանաչափի նվազեցման օֆերտա, որն ակցեպտավորվել է Բանկի կողմից, սակայն մինչև քարտի միջոցով հասանելի վարկային սահմանաչափը նվազեցման դիմումում նշված գումարի չափով նվազեցնելը հաճախորդը քարտի կամ դրա վավերապայմանների կիրառմամբ իրականացրել է այնպիսի գումարի գործարք, որը նրան այլևս հասանելի չէր լինի վարկային սահմանաչափի նվազեցումից հետո կարող է առաջանալ վճարային սահմանաչափի գերաժախս: Ընդ որում, վարկային սահմանաչափի նվազեցման օֆերտան համարվում է Բանկի կողմից ակցեպտավորված օֆերտան Բանկ ներկայացնելուց հետո Բանկի կողմից վերջինիս պայմանները կատարելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելու պահից:



4.13.2.9. Քարտին հասանելի միջոցների օգտագործում մինչև հաշվանցվելը. չհաշվանցված մուտքային գործարքների (քարտից քարտ փոխանցման ստացման, գործարքի հետվերադարձի և այլն) դեպքում ելքային գործարքների կատարման արդյունքում ձևավորված գերաճախս:

5 Միջնորդավճարներ

5.1 Վճարային քարտի թողարկման վճար

5.1.1 Վճարային քարտերի թողարկման համար Բանկը թողարկման վճար չի սահմանում: Հեռահար եղանակով Վճարային քարտերի, այդ թվում՝ կից քարտերի թողարկման, վերաթողարկման համար վճարը սահմանվում է բանկի սակագներով: Ընդ որում՝ հեռահար եղանակով Վճարային քարտերի, այդ թվում՝ կից քարտերի թողարկման, վերաթողարկման միանվագ վճարը չի հանդիսանում Վճարային քարտերի տարեկան կամ ամսական սպասարկման վարձ:

5.2 Տարեկան կամ ամսական սպասարկման վարձ

5.2.1 Վճարային քարտերի սպասարկման համար Բանկը սահմանում է վճարային քարտի տարեկան կամ ամսական սպասարկման վարձ: Ընդ որում, վճարային քարտը կցվում է համապատասխան քարտային հաշվին և անկախ քարտապանի մոտ վճարային քարտի ֆիզիկապես առկա լինելուց վճարային քարտի սպասարկման վճարը հաշվարկվում և գանձվում է՝ սույն կանոններով սահմանված կարգով:

5.2.2 Վճարային քարտի տարեկան սպասարկման վարձը գանձվում է նախօրոք գալիք տարվա համար և վճարային քարտի կամ քարտային հաշվի ժամկետից շուտ փակման դեպքում վերադարձման ենթակա չէ:

5.2.3 Վճարային քարտի ամսական վարձը հաշվառվում և գանձվում է յուրաքանչյուր նախօրոք ամսվա համար, եթե տվյալ ամսվա ընթացքում վճարային քարտը գտնվում է գործող կարգավիճակում (փակված չէ): Վճարային քարտի տարեկան կամ ամսական վարձը գանձվում է հաճախորդի հաշվին առկա մնացորդից: Սպասարկման վարձի գանձումն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում (վճարային քարտերով իրականացվող գործառնություններին բնորոշ յուրահատկությունների պատճառով) կամ տեխնիկական պատճառներով տարեկան կամ ամսական սպասարկման վարձը կարող է գանձվել ավելի ուշ նախօրոք տարիների կամ ամիսների համար՝ սույն կանոնների 5.8 կետով սահմանված կարգով:

5.2.4 Վճարային քարտի ամսական վարձի համար ամիսը համարվում է քարտի թողարկման օրվանից սկսած 1 (մեկ) ամիս ժամանակահատվածը և հաշվարկվում ու գանձվում է տվյալ օրվա ավարտին:

5.3 Քարտային հաշվի նվազագույն մնացորդ

5.3.1 Վճարային քարտերին կցված քարտային հաշվի համար Բանկը կարող է սահմանել քարտային հաշվի նվազագույն մնացորդ:

5.3.2 Քարտային հաշվի նվազագույն մնացորդի սահմանման նպատակն է քարտապանին քարտային հաշվի գերաճախսից հնարավորին չափով զերծ պահելը:

5.3.3 Քարտային հաշվի նվազագույն մնացորդը, որպես կանոն, սառեցվում է քարտային հաշվին իրականացված առաջին մուտքից և անհասանելի է հետագա օգտագործման համար:

5.3.4 Քարտային հաշվի նվազագույն մնացորդը վերադարձվում է քարտապանին վճարային քարտը և քարտային հաշիվը փակելիս:

5.3.5 Քարտային հաշվի նվազագույն մնացորդը օգտագործվում է նաև քարտապանի Բանկի առջև առաջացած պարտավորությունների մարման նպատակով, որի արդյունքում առաջանում է քարտային հաշվի նվազագույն մնացորդի պակասորդ:

5.3.6 Քարտային հաշվի նվազագույն մնացորդի պակասորդը վերականգնվում է քարտային հաշվին դրամական միջոցների առաջին իսկ մուտքից:

5.4 Վճարային քարտի կամ PIN կոդի վերաթողարկման վճար

5.4.1 Վճարային քարտերի վերաթողարկման (ինչպես ժամկետային, այնպես էլ՝ քարտի կորստի կամ վնասման դեպքում) կամ PIN կոդի վերաթողարկման համար Բանկը կարող է սահմանել վճարային քարտի կամ PIN կոդի վերաթողարկման վճար:

5.4.2 Վճարային քարտի կամ PIN կոդի վերաթողարկման վճարը գանձվում է վճարային քարտի կամ PIN կոդի վերաթողարկմանը հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Սակայն տվյալ գանձումն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում (վճարային քարտերով իրականացվող



գործառնություններին բնորոշ յուրահատկությունների պատճառով) կամ տեխնիկական պատճառներով վճարային քարտի կամ PIN կոդի վերաթողարկման վճար կարող է գանձվել ավելի ուշ, կամ սույն Կանոնների 5.8 կետով սահմանված կարգով:

5.5 Միջնորդավճարներ կանխիկացման գործառնությունների համար

5.5.1 Կանխիկացման գործառնությունների համար Բանկը կարող է սահմանել կանխիկացման միջնորդավճարներ:

5.5.2 Կանխիկացման միջնորդավճարը գանձվում է Քարտային հաշվին գործարքների հաշվանցման ժամանակ՝ Քարտային հաշվի մնացորդից: Գանձումն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում կամ տեխնիկական պատճառներով կանխիկացման միջնորդավճարը կարող է գանձվել ավելի ուշ, կամ սույն Կանոնների 5.8 կետով սահմանված կարգով:

5.6 Միջնորդավճարներ անկանխիկ գործարքների համար

5.6.1 Անկանխիկ գործառնությունների համար միջնորդավճարները սահմանվում են սակագներով:

5.7 Այլ միջնորդավճարներ

5.7.1 Բանկի սակագներով սահմանված այլ միջնորդավճարների գանձումը իրականացվում է Քարտային հաշվից՝ ծառայության մատուցման փաստից հետո, բացառությամբ քարտային հաշվին դրամարկղից դրամական միջոցների մուտքագրման և քարտային հաշվի փակման համար նախատեսված սակագների, որոնք ենթակա են վճարման Բանկի դրամարկղերում՝ ծառայության մատուցումից առաջ:

5.7.2 Այլ միջնորդավճարների գանձումն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում (վճարային քարտերով իրականացվող գործառնություններին բնորոշ յուրահատկությունների պատճառով) կամ տեխնիկական պատճառներով կանխիկացման միջնորդավճարը կարող է գանձվել ավելի ուշ, կամ սույն Կանոնների 5.8 ենթակետով սահմանված կարգով:

5.8 Միջնորդավճարների գանձումը

5.8.1 Վճարային քարտից գանձվող միջնորդավճարները կարող են գանձվել քարտային հաշվին առկա մնացորդից կամ քարտապանին տրամադրված վարկային սահմանաչափից:

5.8.2 Միջնորդավճարները կարող են գանձվել նաև քարտապանի քարտային հաշվին դրամական միջոցների բացակայության պարագայում: Գերաձախը կարող է մարվել Քարտային հաշվին կատարված մուտքից, իսկ փակված Քարտային հաշվի դեպքում, որի գծով առկա է Բանկի հանդեպ չմարված պարտավորություն, Բանկի համապատասխան հաշվին կատարված մուտքից:

6 Գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում

6.1 Քարտային հաշվի քաղվածք

6.1.1 Բանկը քարտապանին է տրամադրում քարտային հաշվի քաղվածքներ, որտեղ արտացոլված են մասնավորապես քարտային հաշվին կցված բոլոր վճարային քարտերով իրականացված գործարքները՝ քարտապանի կողմից նախընտրած եղանակով և նվազագույնը մեկամսյա պարբերականությամբ:

6.1.2 Բանկի քարտային հաշվի քաղվածքը չի ներառում հավաստագրված կամ չհավաստագրված և դեռևս Բանկի կողմից Քարտային հաշվին չհաշվանցված գործարքները: Արդյունքում հնարավոր է տարբերություն փաստացի իրականացված և քաղվածքում արտացոլված գործարքների և հաշվի մնացորդների միջև:

6.1.3 Քարտային հաշվի քաղվածքները քարտապանի ցանկությամբ կարող են տրամադրվել նրան ինչպես Բանկի մասնաճյուղերում կամ գլխամասային գրասենյակում տպագիր տարբերակով, այնպես էլ՝ առաքվել քարտապանի էլեկտրոնային փոստին՝ համապատասխան դիմումի առկայության դեպքում, կամ քարտապանի նշած հասցեով՝ փոստային առաքման միջոցով: Քաղվածքների առաքման համար Բանկը կարող է սահմանել միջնորդավճարներ՝ բացառությամբ սույն կանոնների 6.1.1 կետով սահմանված քաղվածքների:

6.1.4 Քաղվածքը համարվում է ՀՀ օրենսդրության համաձայն տրամադրված փոստային առաքման դեպքում՝ փոստային առաքում իրականացնող ընկերությանը քարտապանի նշած հասցեով ուղարկելու նպատակով հանձնելու պահից, Բանկի տարածքում ստանալու դեպքում՝ դրա ձևավորման օրվանից, էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում՝ ուղարկում իրականացնելու պահից:

6.2 Հավաստագրման վերաբերյալ տեղեկացում



6.2.1 Հավաստագրման վերաբերյալ տեղեկացման ծառայությունը՝ SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով հաղորդագրությունների միջոցով, բաժանված է երկու տարատեսակի՝ վճարային քարտով գործառնությունների հավաստագրումների մասին տեղեկացում և քարտային հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկացում:

6.2.2 Հավաստագրման ծառայությունը թույլ է տալիս քարտապանին նշել որևէ գումար և այդ գումարին հավասար կամ դրանից բարձր գումարի ցանկացած հավաստագրման դեպքում ստանալ SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով հաղորդագրություն: Հաշվի առնելով այն, որ վճարային քարտերով գործառնությունների մեծամասնությունն իրականացվում են հավաստագրում ստանալուց հետո, քարտապանը հնարավորություն ունի արդյունավետ կերպով և ժամանակի իրական ռեժիմում տեղեկանալ ցանկացած հավաստագրվող գործարքի իրականացման մասին: Ծառայությունը հատկապես կարևոր է վճարային քարտի զեղծարար օգտագործումը կանխելու համար:

6.2.3 Քարտային հաշվով կատարվող գործառնությունների վերաբերյալ SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով տեղեկացման ծառայությունը թույլ է տալիս նաև վերահսկել անմիջապես քարտապանի քարտային հաշիվը: Ծառայության միջոցով քարտապանը կարող է տեղեկանալ քարտային հաշվի մնացորդի, քարտային հաշվին ելքերի և մուտքերի, ինչպես նաև՝ իր վարկային սահմանաչափի մասով ժամկետային և ժամկետանց պարտավորությունների առաջացման մասին:

6.2.4 SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով տեղեկացման ծառայության համար Բանկը գանձում է միջնորդավճարներ՝ համաձայն Բանկի սակագների:

6.2.5 SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով տեղեկացման ծառայությունը ակտիվացվում է քարտապանի ցանկությամբ, Բանկի կողմից սահմանած ձևով դիմում ներկայացնելու միջոցով:

6.2.6 Քարտային հաշվով գործարքի վերաբերյալ SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով տեղեկացում ստանալու և դրա հետ համաձայն չլինելու դեպքում, քարտապանը պարտավոր է անհապաղ դրա վերաբերյալ հայտնել Բանկին:

6.2.7 Քարտապանը պարտավոր է SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով հաղորդագրությամբ հավաստագրման վերաբերյալ տեղեկացման ծառայության համար Բանկ ներկայացված բջջային հեռախոսահամարի փոփոխության դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին: Քարտապանի կողմից բջջային հեռախոսահամարի փոփոխության մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով երրորդ անձանց տեղեկատվության հասանելի դառնալը չի համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության իրապարակում:

7 Քարտային գործառնությունների անվտանգություն

7.1 Վճարային քարտի պահպանումը

7.1.1 Քարտապանը վճարային քարտը պետք է պահպանի այլ անձանց համար անհասանելի վայրում և լինի ուշադիր քարտի նկատմամբ՝ հատկապես հասարակական վայրերում:

7.1.2 Քարտապանը չպետք է բարձրացնի իր հավաստագրման սահմանաչափերն առանց խիստ անհրաժեշտության, քանի որ հավաստագրման սահմանաչափը նվազեցնում է այլ անձանց կողմից քարտի չարտոնված օգտագործման դեպքում առաջացող ռիսկերը:

7.1.3 Քարտապանը վճարումներ կամ կանխիկացում իրականացնելիս՝ չպետք է իր քարտը տրամադրի որևէ այլ անձանց, բացի համապատասխան աշխատակցից (զանձապահից):

7.1.4 Քարտապանը չպետք է վստահի իր վճարային քարտը ցանկացած այլ անձի: Անհրաժեշտության դեպքում նրանց համար պետք է պատվիրել նույն հաշվին կցված կից քարտեր:

7.2 Վճարային քարտի օգտագործումը ՖԳԻԱՍ-ի միջոցով

7.2.1 ՖԳԻԱՍ-ով կամ այլ ինքնասպասարկման սարքի միջոցով գործարք կատարելիս՝ քարտապանը պետք է ուշադրություն դարձնի սարքի արտաքին տեսքին, քարտի ընդունման անցքին և ստեղծաշարին: Օտարաձին սարքերի, տեսահսկման համակարգերի, լարերի առկայության կամ այլ կասկածների դեպքում Բանկը խորհուրդ է տալիս օգտվել այլ ՖԳԻԱՍ-ից կամ ինքնասպասարկման սարքից:

7.2.2 Քարտապանը չպետք է օգտվի ՖԳԻԱՍ-ից և այլ ինքնասպասարկման սարքերից մուտք և անմարդաշատ վայրերում, եթե մոտակայքում նկատվում են կասկածելի անձինք:

7.2.3 ՖԳԻԱՍ-ներից և այլ ինքնասպասարկման սարքերից օգտվելիս՝ PIN ծածկագրի մուտքագրումը քարտապանը պետք է իրականացնի այնպես, որ այն տեսանելի չլինի այլ անձանց: Քարտապանը չպետք է



ընդունի քարտից գումար կանխիկացնելու համար օգնություն ցուցաբերելու վերաբերյալ կողմնակի անձանց առաջարկները:

7.3 Վճարային քարտի օգտագործումը առևտրի կետերում

7.3.1 Քարտապանը առևտրի և սպասարկման կետում գործարք կատարելիս պարտավոր է ստուգել գործարքի գումարը և անդորրագրի մյուս վավերապայմանները:

7.3.2 Քարտապանը առևտրի և սպասարկման կետերում վճարումներ կատարելիս՝ պարտավոր է վճարային քարտը հնարավորինս պահել իր ուշադրության կենտրոնում: Ցանկալի է, որ գործարքներն իրականացվեն քարտապանի ներկայությամբ:

7.3.3 Քարտապանը չպետք է ներկայացնի վճարային քարտը վճարման համար կասկածելի վայրերում կամ ինտերնետային կայքերում (օրինակ՝ գիշերային ակումբներում, էրոտիկ և այլ կասկածելի ինտերնետային կայքէջերում): Մասնավորապես, սույն կետը կարևորվում է Արևելյան Եվրոպայի և Ասիայի երկրներ ճանապարհորդելիս:

7.3.4 Առևտրի և սպասարկման կետերում PIN ծածկագիրը մուտքագրելիս՝ քարտապանը պարտավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ մուտքագրումը իրականացվի POS տերմինալի կամ դրան կցված ստեղնաշարի վրա: Արգելվում է PIN ծածկագրի մուտքագրումը որևէ այլ կերպով:

7.3.5 Եթե առևտրի և սպասարկման կետում քարտապանն իրականացրել է գործարք և տեղում պարզել սխալ գործարք կատարելու փաստը և քարտապանին խոստանում են, որ այն կուղղվի հետագայում, ապա քարտապանը կարող է՝

7.3.5.1. Հրաժարվել ստորագրել անդորրագիրը,

7.3.5.2. Եթե անդորրագիրը ստորագրված է, պահանջել որ կատարվի հետադարձ գործարք և ստորագրել ճիշտ գործարքի նոր անդորրագիրը:

7.3.5.3. Համաձայնության չգալու դեպքում զանգահարել Բանկ կամ դիմել Բանկի մասնաճյուղ հնարավորինս սեղմ ժամկետում:

7.4 Ձեղծարարության դեմ կանխարգելիչ միջոցառումների իրականացում

7.1 Բանկը վճարային քարտով զեղծարարության հնարավոր դեպքերը կանխարգելի նպատակով կարող է իրականացնել վճարային քարտերի կամ գործարքների ինքնաշխատ կասեցում, եթե կատարված գործարքները, համաձայն Բանկի կողմից սահմանված ներքին չափանիշների, համարվում են միջին կամ բարձր ռիսկայնության:

7.2 Քարտապանները սույնով տալիս են իրենց լրիվ և անվերապահ համաձայնությունը 7.4 կետով իրականացվող միջոցառումների վերաբերյալ:

7.3 Բանկի կողմից վճարային քարտերի կամ գործարքների կասեցման համար հիմք հանդիսացած գործարքի կատարումը Քարտապանի կողմից կատարվելու փաստը վերջինիս կողմից հավաստվելու դեպքում, Բանկը քարտապանի նախաձեռնությամբ կարող է իրականացնել վճարային քարտի և գործարքների ապակասեցում:

7.4 Սույն կանոնների 7.4 կետով սահմանված միջոցառումներից Հաճախորդի կողմից հրաժարվելու դեպքում՝ հաճախորդի ֆինանսական կորուստների համար Բանկը պատասխանատվություն, այդ թվում ֆինանսական, չի կրում:

7.5 Վճարային քարտի կամ գործարքների կասեցման դեպքում չի դադարում վճարային քարտի հետ կապված միջնորդավճարների հաշվարկը և գանձումը:

8 Քարտային գործառնությունների բողոքարկում

8.1 Բողոքարկման գործընթաց

8.1.1 Վճարային քարտով կամ դրա վավերապայմանների կիրառմամբ ցանկացած գործարքի կատարման արդյունքում խնդիրների առաջացման դեպքում (այդ թվում՝ ավել գանձված գումարներ, չառաքված կամ չտրամադրված ապրանքներ կամ ծառայություններ, առաքված ապրանքների անհամապատասխանություն և այլն) քարտապանը կարող է սահմանված կարգով դիմել Բանկին գործարքի բողոքարկման համար, եթե խնդիրն անմիջապես առևտրի և սպասարկման կետի հետ լուծելու բոլոր հնարավոր միջոցներն ու տարբերակները սպառված են:

8.1.2 Գործարքի բողոքարկում իրականացնելու համար քարտապանը Բանկի կողմից սահմանված կարգով գրավոր դիմում է Բանկին: Ընդ որում, դիմումը կարող է ներկայացվել ինչպես Բանկ այցելելու միջոցով, այնպես էլ հեռահաղորդակցման միջոցով սույն կանոնների 10.2.7 կետով սահմանված կարգով:



8.1.3 Քարտապանը կարող է իր կողմից չվավերացված վճարային քարտով կամ Priority Pass քարտով իրականացված գործարքների վերաբերյալ իր անհամաձայնությունը ներկայացնել (բողոքարկել) գործարքը ներառող 30-օրյա պարբերականությամբ տրամադրվող քաղվածքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում գործարքների դիմաց բողոքարկում չստանալու դեպքում Քարտային հաշվին հաշվանցված գործարքները համարվում են Քարտապանի կողմից ընդունված և այլևս բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ սույն Կանոնների 8.1.4 կետում նկարագրված դեպքի:

8.1.4 Քարտապանն իր քարտով կատարված գործարքի գծով բողոքարկման դիմումը կարող է ներկայացնել քաղվածքը ստանալու օրվանից ոչ ուշ քան 55 (հիսունհինգ) օրը, եթե դիմումին կից ներկայացնում է սույն Կանոններով սահմանված ժամկետում բողոքարկման դիմում ներկայացնելու անհնարինությունը հավաստող փաստաթղթեր:

8.1.5 Քարտապանի կողմից իր կողմից չվավերացված գործարքների վերաբերյալ դիմում-պահանջը ներկայացնելուց հետո Բանկը ոչ ուշ, քան դիմում-պահանջը ներկայացնելուց հետո 90-րդ օրը.

1) հատուցում է քարտապանի հաշվից դեբետագրված միջոցները, կամ

2) մերժում է քարտապանի կողմից ներկայացված դիմում-պահանջում նշված գումարը հատուցելու պահանջը, եթե.

ա. խախտվել են սույն Կանոններով սահմանված դիմում-պահանջի ներկայացման ժամկետները, կամ

բ. քարտապանի կողմից խախտվել են սույն կանոններով կամ Պայմանագրով սահմանված դրույթները, որոնց հետևանքով են ի հայտ եկել քարտապանի կողմից չվավերացված գործարքները, կամ

գ. Բանկն ունի հիմնավոր փաստեր, որոնք հիմք են հանդիսանում բողոքարկված գործարքները, որպես քարտապանի կողմից կատարված զեղծարարություն/խարդախություն բնութագրելու համար:

8.1.6 Սույն Կանոնների 8.1.5-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության իմաստով Պայմանագրով սահմանված դրույթների խախտում է համարվում.

8.1.6.1 Քարտապանի կողմից վճարային քարտով գործառնությունների կատարման անվտանգությունը ապահովելու նպատակով Կանոններով սահմանված անհրաժեշտ կամ ցանկալի միջոցառումները չիրականացնելը, այդ թվում, բայց ոչ միայն, Կանոնների 4.6.6-4.6.9 կետերով սահմանված գործողությունները չիրականացնելը կամ գործողություններից ձեռնպահ չմնալը:

8.1.6.2 Քարտապանի կողմից սույն Կանոնների 7 գլխի դրույթներից յուրաքանչյուրի խախտումը կամ ոչ պատշաճ իրականացումը,

8.1.6.3 Սույն Կանոնների 7.4 ենթագլխի դրույթների համաձայն կամ Բանկին հասանելի դարձած տեղեկատվության վերլուծության հիման վրա կասեցված քարտի ապակասեցումը Քարտապանի նախաձեռնությամբ, որից հետո տեղի է ունեցել զեղծարարություն կամ խարդախություն,

8.1.6.4 Քարտապանի կողմից Պայմանագրի ցանկացած դրույթի խախտում կամ Կանոններով սահմանված դրույթներին ոչ համապատասխան գործողությունը կամ անգործությունը, որի հետևանքով ի հայտ է եկել քարտապանի կողմից չվավերացված գործարք:

8.1.7 Սույն կանոնների 8.1.5 կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության իմաստով բողոքարկված գործարքները որպես քարտապանի կողմից կատարված զեղծարարություն/խարդախություն բնութագրելու համար հիմնավոր փաստ է համարվում, այդ թվում, բայց ոչ միայն, գործարքի կատարումը PIN կոդի գործածմամբ:

8.1.8 Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում վճարային քարտով կամ Priority Pass քարտով իրականացված, քարտապանի կողմից վավերացված գործարքների համար, սակայն նման գործարքները քարտապանի կողմից բողոքարկվելու դեպքում, ուսումնասիրում է համապատասխան դիմում-պահանջները՝ սույն կանոնների, ՀՀ օրենսդրության և համապատասխան վճարահաշվարկային համակարգի կանոններին համապատասխան: Բանկը քարտապանի կողմից վավերացված գործարքների վերաբերյալ ներկայացված դիմում-պահանջներն ուսումնասիրում է, եթե դրանք ներկայացվել են գործարքի հաշվանցումից հետո 50 (հիսուն) օր ժամկետում: Նշված ժամկետում գործարքների գծով բողոքարկման դիմում չստանալու դեպքում Քարտային հաշվին հաշվանցված գործարքները համարվում են Քարտապանի կողմից ընդունված և այլևս բողոքարկման ենթակա չեն: Նման գործարքները բողոքարկվելու դեպքում Բանկը հաճախորդին պատասխանը ներկայացնում է առավելագույնը 50 (հիսուն) օր ժամկետում, եթե վճարահաշվարկային համակարգի կանոններով այլ ժամկետներ նախատեսված չեն: Ընդ որում, գործարքը համարվում է վավերացված քարտապանի կողմից, այդ թվում, բայց ոչ միայն, այն դեպքերում, երբ այն կատարվել է PIN կոդի մուտքագրմամբ և (կամ) ինտերնետ միջավայրում պաշտպանված գործառնությունների համար սահմանված վճարային քարտի և (կամ) հաճախորդի իրական անձնական տվյալների) մուտքագրմամբ (որոնց վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի չլիներ այլ անձանց), 3D Secure համակարգի, բիոմետրիկ տվյալների, կամ բանկի մոբայլ հավելվածում իր կողմից ձևավորված անցակոդի կիրառմամբ :



8.1.9 Բանկը, քարտապանի կողմից գործարքի վերաբերյալ դիմում-պահանջ ստանալու դեպքում, նախաձեռնում է գումարների հետգանձման գործընթաց, բացառությամբ այն դեպքերի, երբ համաձայն համապատասխան վճարահաշվարկային համակարգի կանոնների բողոքարկվող գործարքի համար հետգանձման հնարավորություն նախատեսված չէ: Բանկի կողմից նախաձեռնված հետգանձման գործընթացի արդյունքում քարտապանի դիմում-պահանջը մերժվում է, եթե նախաձեռնված հետգանձման գործընթացը չի կարող լուծվել Բանկի օգտին, կամ քարտապանի կողմից դիմում-պահանջի ներկայացման ժամկետն այնպիսին է, որ Բանկը համապատասխան վճարահաշվարկային համակարգի կանոններով հետգանձման գործընթացի համար նախատեսված ժամկետներում հնարավորություն չունի իրականացնել այն, բացառությամբ այն դեպքերի, երբ քարտապանի կողմից բողոքարկվում է իր կողմից չվավերացված գործարք և բողոքը ենթակա է բավարարման սույն կանոնների 8.1.5 կետին համապատասխան:

8.1.10 Այն դեպքում, երբ քարտապանի կողմից բողոքարկվող գործարքը սպասարկվել է այլ բանկի կողմից, և սպասարկող բանկը մերժում է հետգանձման դիմումը, Բանկը ուսումնասիրում է սպասարկող բանկի կողմից ներկայացված պատասխանը և տեղեկացնում է Հաճախորդին հետգանձման գործընթացի ավարտի մասին, կամ առաջարկում է դիմել Բանկ՝ բողոքարկման գործընթացի երկրորդ փուլը համապատասխան վճարահաշվարկային համակարգի կանոններին համաձայն նախաձեռնելու խնդրանքով:

8.1.11 Եթե քարտապանի հետգանձման գործընթաց ենթադրող դիմում-պահանջի շրջանակներում քարտապանի քարտային հաշին Բանկի կողմից փոխանցվել են գումարներ, սակայն հետագայում գործարքը սպասարկած բանկի կողմից կամ վճարահաշվարկային կանոններին համապատասխան հետգանձման դիմումը մերժվել է, սույնով Քարտապանը համաձայնություն է տալիս Բանկին՝ իր հաշվին փոխանցված գումարները առանց իր լրացուցիչ համաձայնության գանձելու վերաբերյալ:

8.1.12 Քարտապանի կողմից ներկայացված դիմում-պահանջների ուսումնասիրության ընթացքում Բանկը կարող է քարտապանից պահանջել լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր:

9 Բանկի պարտականությունները կիրավունքները

9.1 Բանկը պարտավորվում է՝

9.1.1 քարտապանին նոր թողարկված կամ վերաթողարկված վճարային քարտն ուղարկել կամ Բանկի մասնաճյուղերում ստացման համար հասանելի դարձնել սույն կանոնների 3.3 կետում նախատեսված կարգով և ժամկետներում,

9.1.2 ապահովել վճարային քարտի սպասարկումը՝ համաձայն Visa International, MasterCard Worldwide, Arca վճարահաշվարկային համակարգերի կողմից ընդունված կանոնների և Պայմանագրի,

9.1.3 30-օրյա պարբերականությամբ քարտապանին տրամադրել քաղվածք՝ նրա նախընտրած եղանակով,

9.1.4 կանխիկ կամ անկանխիկ եղանակով իրականացնել գումարների մուտքագրումը Քարտային հաշվին՝ ոչ ուշ, քան համապատասխան հանձնարարականի (այդ թվում՝ նաև վճարահաշվարկային կազմակերպություններից և պրոցեսինգային ընկերությունից ստացված վճարահաշվարկային փաստաթղթերի) և համապատասխան գումարի (կամ գումարը Բանկի հաշիվներին մուտքագրելու պարտավորության) Բանկ մուտքագրելու օրվան հաջորդող բանկային օրը,

9.1.5 կանխիկ կամ անկանխիկ եղանակով իրականացնել գումարների ելքագրումը Քարտային հաշվից՝ ոչ ուշ, քան համապատասխան հանձնարարականի (այդ թվում՝ նաև վճարահաշվարկային կազմակերպություններից և պրոցեսինգային ընկերությունից ստացված վճարահաշվարկային փաստաթղթերի) Բանկ մուտքագրելու օրվան հաջորդող բանկային օրը:

9.1.6 Սույն Կանոնների 8.1 կետով սահմանված կարգով իրականացնել գործարքների բողոքարկման գործընթացը,

9.1.7 Վճարային քարտի կորստի վերաբերյալ քարտապանից ծանուցում ստանալուն պես՝ կատարել վճարային քարտի գործողության կասեցում:

9.1.8 քարտային հաշվի մնացորդին հաշվեգրել (կուտակել) և վճարել տոկոսներ՝ սույն Կանոնների 4.11 կետով սահմանված կարգով,

9.1.9 ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով պահպանել քարտապանի վերաբերյալ իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

9.2 Բանկն իրավունք ունի՝

9.2.1 ցանկացած օրինական եղանակներով ստուգել քարտապանի վճարունակությունը և անձնական տվյալները,



9.2.2 մերժել Առաջարկ-դիմումը, ինչպես նաև՝ կասեցնել վճարային քարտը և (կամ) Քարտային հաշիվը, եթե հաճախորդը պատշաճ կերպով չի ներկայացրել տվյալ քարտատեսակի համար սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը կամ դրանցում արտացոլել է կեղծ կամ անարժանահավատ տվյալներ,

9.2.3 մերժել Առաջարկ-դիմումը, եթե վերջինիս կատարման ընթացքում ի հայտ են գալիս հաճախորդի հաշիվներին առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին ԴԱՀԿ ծառայության կամ այլ մարմնի որոշումներ,

9.2.4 մերժել վճարային քարտի վերաթողարկման ցանկացած դիմում՝ առանց քարտապանին բացատրություններ տրամադրելու,

9.2.5 իրավասու պետական մարմինների կողմից ստացված համապատասխան որոշումների հիման վրա կասեցնել վճարային քարտով և կից քարտերով գործառնությունների իրականացումը,

9.2.6 մերժել քարտի և քարտային հաշվի փակման դիմումի կատարումը, եթե առկա են քարտային հաշվին առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին ԴԱՀԿ ծառայության կամ այլ մարմնի որոշում, կամ հաշվի փակումը սահմանափակող այլ գործոններ: Բացառություն է կազմում 0-ական մնացորդով հաշիվների փակումը:

9.2.7 Հատուկ (արտոնյալ) սակագներով վճարային քարտերի տրամադրման (այդ թվում՝ աշխատավարձային նախագծերի և այլ՝ արտոնյալ սակագների կիրառում նախատեսող Բանկի հետ համագործակցության առկայության) դեպքում, արտոնությունների տրամադրման նախապայմանի դադարեցման պահից վճարային քարտի տրամադրման և սպասարկման սակագները համապատասխանեցնել տվյալ պահին Բանկում գործող ստանդարտ սակագներին կամ այլ արտոնյալ սակագներին (բավարար հիմքերի առկայության դեպքում):

9.2.8 վճարային քարտի տրամադրման և սպասարկման պայմանների և Կանոնների խախտման դեպքում կասեցնել քարտապանի վճարային քարտը կամ կից քարտերը և առանց ծանուցման անակցեպտ կարգով մարել քարտի գծով առաջացած ժամկետանց պարտավորությունները քարտապանի՝ Բանկում գտնվող ցանկացած այլ հաշիվներից, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ ձեռնարկել պարտքերի ստացմանն ուղղված միջոցառումներ, և մուտքագրել քարտապանի անունը համակարգի անբարեխիղճ քարտապանների ցուցակում,

9.2.9 քարտի կասեցման դեպքում կասեցնել նաև բոլոր կից քարտերով գործառնությունները,

9.2.10 Անակցեպտ կերպով քարտային հաշվից գանձել՝

9.2.10.1. սխալմամբ քարտային հաշվին մուտքագրված գումարները,

9.2.10.2 Պայմանագրով նախատեսված վճարները, տուգանքներն ու տույժերը,

9.2.10.3 իրավասու պետական մարմինների կողմից ստացված որոշումների հիման վրա գանձման ենթակա գումարները,

9.2.10.4 վճարային քարտի և կից քարտերի միջոցով կատարված գործարքների գումարները՝ վճարահաշվարկային համակարգերից ստացված փոխհաշվարկային փաստաթղթերի հիման վրա,

9.2.10.5 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հարկերը,

9.2.10.6 Պայմանագրի խախտումներով իրականացված գործարքների գումարները,

9.2.10.7 անհրաժեշտության դեպքում՝ քարտապանին որոնելու աշխատանքների իրականացման ծախսերը,

9.2.10.8 Բանկի հանդեպ քարտապանի պարտավորությունների կատարմանն ուղղված բոլոր ծախսերը՝ անկախ դրանց առաջացման հիմքերից,

9.2.10.9 վճարային քարտերի օգտագործման հետ կապված լրացուցիչ այն ծառայություններից օգտվելու վճարները, որոնք ներառված չեն վճարային քարտի և կից քարտերի սպասարկման սակագներում,

9.2.10.10 Վճարահաշվարկային համակարգերի կանոններով և սակագներով սահմանված գործարքների իրականացման արդյունքում ձևավորված միջնորդավճարները, եթե դրանք նախատեսված չեն Բանկի սակագներով,

9.2.10.11 Սույն Կանոնների 0 և 4.5.10 կետով սահմանված գումարները,

9.2.11 քարտային հաշվի գերաձախս առաջանալու և այն քարտապանի կողմից սահմանված ժամկետում չմարելու դեպքերում կատարել վճարային քարտի կասեցում ինչպես նաև՝ կատարել տույժի հաշվարկում (կուտակում)՝ համաձայն Բանկի սակագների,

9.2.12 իրականացնել բոլոր անհրաժեշտ արտարժույթային փոխարկումները սույն Կանոնների 4.5 կետի համաձայն, ընդ որում, գործարքի փաստացի կատարման ամսաթվի և գործարքի հաշվանցման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում արտարժույթային փոխարժեքների տատանումներից քարտապանի հնարավոր ֆինանսական կորուստները չեն կարող լինել բողոքարկման առարկա,

9.2.13 վճարային քարտից հրաժարվելու դեպքում քարտապանին չվերադարձնել վճարային քարտի սպասարկման վարձը:



9.2.14 Օտարերկրյա պետական լիազոր մարմիններին (այսօր՝ Լիազոր մարմին) և(կամ) վերջինիս կողմից նշված անձանց բացահայտել իր վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող և ցանկացած այլ տեղեկատվություն:

9.2.15 Սույն կանոնների 10.1.18 կետում նշված հարկային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով քարտապանի՝ Բանկում սպասարկվող բանկային և այլ հաշիվների նկատմամբ կիրառել սահմանափակում (արգելադրում) և(կամ) արգելափակել հաշվով գործառնությունների կատարումը, այդ կապակցությամբ մերժելով հաշվում առկա միջոցները տնօրինելու և հաշվով գործառնություններ կատարելու՝ քարտապանի և երրորդ անձանց կողմից ներկայացված բոլոր հանձնարարականները, Լիազոր մարմնի և(կամ) վերջինիս կողմից նշված անձի օրինական պահանջի առկայության դեպքում համապատասխան դրամական միջոցները՝ անակցեպատ կարգով՝ առանց քարտապանի լրացուցիչ հանձնարարությունների, գանձելով քարտապանի Բանկում վարվող հաշիվներից, փոխանցել Լիազոր մարմնին և(կամ) վերջինիս կողմից նշված անձին, իսկ սույն կանոնների 10.1.18 կետով ստանձնած պարտավորությունները՝ Քարտապանի կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում նաև միակողմանի լուծել Պայմանագիրը:

9.2.16 Բացահայտել Պայմանագրից բխող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները և հաճախորդին վերաբերող ցանկացած այլ տեղեկատվություն և փաստաթուղթ՝

9.2.16.1 քրեական հետապնդման մարմիններին, եթե նման բացահայտումն անհրաժեշտ է Բանկի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար,

9.2.16.2 դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարմիններին՝ կատարողական թերթի կատարման, ինչպես նաև՝ ապահովման միջոցների հաշվին պայմանագրով իր պահանջների առաջնահերթ բավարարում ստանալու համար:

9.2.17 Միջազգային իրավունքի նորմերի, միջազգային կառույցների և/կամ օտարերկրյա պետությունների կողմից սահմանված պատժամիջոցների հիման վրա և/կամ ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Բանկի իրավասու մարմնի որոշմամբ մերժել Հաճախորդի հետ գործարքի կատարումը, գործարար հարաբերությունների հաստատումը և/կամ կասեցնել, դադարեցնել գործարքի կատարումը և/կամ գործարար հարաբերությունները և/կամ միակողմանիորեն փակել Հաճախորդի հաշիվները կամ մինչև Բանկի պահանջով Հաճախորդի կողմից վերջինիս նույնականացման, գործարքը հիմնավորող կամ այլ փաստաթղթերի ներկայացումը/համալրումը կամ պահանջների կատարումը, ժամանակավորապես սահմանափակել այդ հաշիվներով գործառնությունները (օրինակ՝ արտարժույթային հաշիվներով միջազգային փոխանցումների կատարման և/կամ ստացման արգելք, միջազգային վճարային քարտերի տրամադրման/սպասարկման արգելք):

9.2.18 Հաճախորդը տեղեկացված է և համաձայն է, որ Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ Հաճախորդի կողմից կամ Հաճախորդին օգտին ներկայացված վճարման հանձնարարականների հիման վրա փոխանցվող միջոցները միջազգային իրավունքի նորմերի, միջազգային կառույցների և/կամ օտարերկրյա պետությունների կողմից սահմանված պատժամիջոցների հիման վրա բլոկավորվում (սառեցվում են) են այդ թվում՝ միջոցների փոխանցման գործընթացում ներգրավված միջնորդ բանկերում: Նկարագրված դեպքերում միջոցները Բանկի կողմից Հաճախորդին չեն վճարվում, չեն փոխհատուցվում և(կամ) չեն վերադարձվում և նման հանգամանքների բացասական հետևանքների ռիսկը կրում է Հաճախորդը:

9.2.19 Բանկի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակներում Բանկի հանդեպ ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում բլոկավորել քարտը:

9.3 Եթե Բանկը ստացել է որևէ տեղեկություն, որ Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված Հաճախորդի հաղորդակցման տվյալները, այդ թվում՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե, բնակության հասցե և այլն, Հաճախորդին այլևս չի պատկանում, ապա Բանկն իրավունք ունի, իսկ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Բանկի կողմից միակողմանիորեն դադարեցնել տվյալ հաղորդակցման միջոցներով Հաճախորդին հաղորդագրությունների, ծանուցումների կամ պայմանագրով կամ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունների ուղարկումը և սահմանելու այլ հաղորդակցման միջոց (եղանակ/տարբերակ): Սույն կետով սահմանված դեպքում հաղորդագրությունների (ծանուցումների) չուղարկման պարագայում Հաճախորդն ընդունում է, որ Բանկին չի ներկայացնելու դրանց չստացման հետ կապված պահանջներ:

10 Քարտապանի պարտավորությունները և իրավունքները

10.1 Քարտապանը պարտավորվում է՝

10.1.1 Առաջարկ-դիմումը լրացնելիս՝ իր կամ իր կողմից տվյալ գործարքի իրականացման համար պատշաճ կերպով լիազորված անձի վերաբերյալ տրամադրել հավաստի տեղեկություններ,



10.1.2 իրականացնել գործարքներ միայն քարտային հաշվի մնացորդի (վարկային սահմանաչափի), հավաստագրման և վճարային սահմանաչափերի սահմաններում,

10.1.3 վճարել Բանկին վճարային քարտի և կից քարտերի և քարտային հաշվի սպասարկման հետ կապված բոլոր վճարները և տուժանքը, որոնք բխում են Պայմանագրից և Visa International, MasterCard Worldwide կամ Arca վճարահաշվարկային համակարգերի կանոններից,

10.1.4 վճարել քարտային հաշվի գերաճախս առաջանալու դեպքում 30 օրվա ընթացքում, իսկ վճարային քարտի վարկավորված լինելու դեպքում՝ վարկային պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում մարել առաջացած գերաճախսի գումարը և հաշվարկված տուժանքը,

10.1.5 վճարային քարտի գործողության դադարեցման դեպքում ոչնչացնել այն 5 աշխատանքային օրվա ընթացքում

10.1.6 վճարային քարտի կամ կից քարտերի կորստի կամ քարտի վավերապայմանների (ռեկվիզիտների) և (կամ) PIN-կոդի՝ այլ անձանց հասանելի դառնալու կասկած ունենալու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին՝ վճարային քարտի կասեցման համար,

10.1.7 նախկինում կորցրած վճարային քարտը կամ կից քարտերը գտնելու դեպքում ոչնչացնել դրանք:

10.1.8 չբողոքարկել PIN-կոդի մուտքագրմամբ իրականացված գործարքները՝ դրանք իր կողմից չթույլատրելու և/կամ չիրականացնելու հիմքերով,

10.1.9 6 (վեց) ամիս պահպանել վճարային քարտով կամ կից քարտերով իրականացված գործարքների արդյունքում տրամադրված անդորրագրերը և բողոքարկման վերլուծության ընթացքում Բանկի պահանջով ներկայացնել դրանք,

10.1.10 գործարքների վերաբերյալ իր անհամաձայնությունը կամ բողոքը ներկայացնել սույն Կանոնների 8.1 կետով սահմանված կարգով և ժամկետներում,

10.1.11 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում Բանկին տեղեկացնել հեռախոսահամարի, աշխատանքի, բնակության վայրի և նախկինում տրամադրված այլ տեղեկությունների (անձնական տվյալների) փոփոխությունների մասին,

10.1.12 գործարքների իրականացման ժամանակ սպասարկող աշխատակցի պահանջով ներկայացնել անձր հաստատող փաստաթուղթ,

10.1.13 առևտրի և սպասարկման կետերում գնված ապրանքների կամ մատուցված ծառայությունների որակից դժգոհ լինելու և/կամ ընդհանրապես ապրանքները կամ ծառայությունները չստանալու դեպքում նախևառաջ համապատասխան կետից պահանջել պատշաճ որակի ապրանքի/ծառայության տրամադրում և միայն դրանից հետո դիմել Բանկ՝ վճարված գումարի բողոքարկման գործընթաց սկսելու համար,

10.1.14 Բանկի պահանջով փոխհատուցել բողոքարկվող գումարի հետգանձման հետ կապված Բանկի կատարած բոլոր ծախսերը,

10.1.15 երրորդ անձանց չփոխանցել վճարային քարտը կամ կից քարտերը և PIN-կոդը,

10.1.16 Բանկից չպահանջել գործարքների կատարման և քարտային հաշվին փաստացի հաշվանցման ժամանակահատվածում արտարժույթային փոխարժեքների տատանումից առաջացած հնարավոր կորուստների փոխհատուցում:

10.1.17 համաձայնվել սույն Կանոնների 4.5 կետով սահմանված արտարժույթի փոխարկումների իրականացման կարգին և փոխարժեքներին:

10.1.18 << և օտարերկրյա երկրների օրենսդրությամբ ստանձնած հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու, պարտավորությունների պատշաճ կատարումը ապահովելու, այդ պարտավորությունների ցանկացած փոփոխությունը բացահայտելու նպատակով, Բանկի առաջին իսկ պահանջով վերջինիս տրամադրել ցանկացած տեղեկատվություն, հաշվետվություն և փաստաթուղթ՝ Բանկի սահմանած ձևով, և ցանկացած այլ եղանակով համագործակցել Բանկի հետ:

10.1.19 Սույն կանոններով սահմանված դեպքերում ոչնչացնել վճարային քարտը՝ վերջինիս մագնիսական ժապավենը և (կամ) չիպը կտրատելու (դակելու) միջոցով:

10.1.20 Խստորեն հետևել Պայմանագրին:

10.2 Քարտապանն իրավունք ունի՝

10.2.1 օգտագործել վճարային քարտը որպես վճարային միջոց գործառնություններ կատարելու համար,

10.2.2 դիմել Բանկին կից քարտեր ստանալու համար, կից քարտերը կասեցնելու համար՝ գրավոր տեղեկացնելով դրանց փակման մասին՝ ոչնչացնելով դրանք

10.2.3 30-օրյա պարբերականությամբ անվճար Բանկից ստանալ քարտային հաշվով կատարված գործարքների քաղվածքը,



10.2.4 ըստ պահանջի, ներկայացնել Բանկին սույն Կանոններով սահմանված կարգով թույլատրելի հանձնարարականներ,

10.2.5 պատվիրել և ստանալ նոր վճարային քարտ/կից քարտեր՝ ժամկետները լրացած քարտերի փոխարեն,

10.2.6 Սույն Կանոնների 8.1 կետի համաձայն, Բանկին ներկայացնել գործարքների բողոքարկման դիմումներ, ընդ որում, քարտապանի կողմից չթույլատրված կամ նրա կողմից չկատարված լինելու պատճառով գործարքների դիմաց բողոքարկում կարող է ներկայացվել բացառապես վճարային քարտի վավերապայմանները (ռեկվիզիտները) փոփոխող վերաթողարկում իրականացնելու դիմում կամ վճարային քարտի փակման դիմում ներկայացնելուց հետո,

10.2.7 Դիմել Բանկին (այդ թվում՝ Բանկի հեռախոսային սպասարկման համարներով հեռախոսազանգ կատարելու և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով հաճախորդի նույնականացման գործընթացը անցնելուց հետո)՝

10.2.7.1 Վճարային քարտի կասեցման և ապակասեցման, ինչպես նաև՝ գործարքների իրականացման սահմանաչափերի փոփոխման համար (Բանկը կարող է մերժել սահմանաչափերի փոփոխման պահանջը եթե տվյալ քարտային պրոդուկտի սակագներով նախատեսված է, որ դռանք ենթակա չեն փոփոխման),

10.2.7.2 Անձնական տվյալների փոփոխման համար: Ընդ որում, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այն տվյալների համար, որոնց համար դիմումը ընդունվում է բացառապես հաճախորդի ներկայությամբ, Բանկի հեռախոսային սպասարկման համարներով հեռախոսազանգ կատարելու միջոցով անձնական տվյալների փոփոխություն չի իրականացվում,

10.2.7.3 Գործարքների բողոքարկումների իրականացման համար,

10.2.7.4 Բանկի սակագներով և պայմաններով սահմանված ծառայություններին բաժանորդագրման համար: Սույն կետով սահմանված դեպքերում Բանկը, իր ներքին իրավական ակտերի համաձայն, կարող է հաճախորդից պահանջել էլեկտրոնային փոստի միջոցով անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում:

10.2.8 Վճարային քարտով իրականացվող չհավաստագրված գործառնություններից բխող ֆինանսական ռիսկերից զերծ մնալու անհրաժեշտության դեպքում դիմել Բանկին՝ հստակ նշելով, թե ըստ Visa International, MasterCard Worldwide միջազգային վճարային համակարգերի տարածքային տարանջատման աշխարհի, որ տարածաշրջաններում և ինչ ժամկետով է ցանկանում կանխել վճարային քարտով բոլոր գործարքների իրականացումը, ընդ որում, վճարային քարտով և կից քարտերով իրականացված բոլոր գործարքների կանխման նվազագույն ժամկետը կազմում է 2 շաբաթ՝ սկսած դիմումը ստանալու աշխատանքային շաբաթվա Շաբաթ օրվանից:

11 Բանկի և քարտապանի պատասխանատվությունը

11.1 Քարտապանը պատասխանատվություն է կրում Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների չկատարման և (կամ) ոչ պատշաճ կատարման համար:

11.2 Այն վնասը, որը պատճառվել է Բանկին քարտապանի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով, ենթակա է փոխհատուցման ամբողջ չափով:

11.3 Բանկը պատասխանատվություն է կրում քարտապանի, վճարային քարտի և գործարքների հետ կապված ամբողջ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության և Պայմանագրի:

11.4 Բանկը պատասխանատվություն չի կրում իր վերահսկողության շրջանակներից դուրս տեղի ունեցած կոնֆլիկտային իրավիճակների համար, որոնք կապված են այլ բանկերի սպասարկման կետերի կողմից վճարային քարտը (կից քարտերը) սպասարկման չընդունելու, իրեն կամ այլ բանկերին պատկանող ծրագրա-տեխնիկական սարքերի անսարքության (ՖԳԻԱՍ-ներ և տերմինալներ), ինչպես նաև՝ քաղվածքների ավտոմատացված ուղարկման դեպքում ծրագրային խափանումների հետևանքով քաղվածքների չստացման համար:

11.5 Քարտապանը պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների համար՝ անկախ մեղքի բացակայությունից:

11.6 Բանկը պատասխանատվություն է կրում կորցրած վճարային քարտի ոչ օրինական օգտագործմամբ քարտապանին պատճառված վնասների համար միայն կորստի վերաբերյալ ծանուցում ստանալու և միայն դրանից հետո իր կողմից հավաստագրված գործարքների համար, բացառությամբ Stand-in հավաստագրում ստացած գործարքների:

11.7 Վճարային քարտի կասեցում իրականացնելուց հետո Բանկը պատասխանատվություն է կրում ցանկացած հավաստագրված գործարքի համար, բացառությամբ Stand-in հավաստագրում ստացած գործարքների:



11.8 Քարտապանը ֆինանսական պատասխանատվություն է կրում առանց հավաստագրման վճարային քարտով կամ դրա վավերապայմանների միջոցով և կից քարտերով կատարված գործարքների համար:

11.9 Քարտապանի կողմից սույն կանոնների 10.1.18 կետով ստանձնած պարտավորություններ չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է հիմք հանդիսանալ վերջինիս կողմից օրենքի ուժով, այդ թվում՝ օտարերկրյա երկրների օրենսդրությամբ, ստանձնած հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած այլ մարմինների և անձանց կողմից՝ բանկային համակարգի միջոցով կատարվող գործարքների դեպքում, քարտապանի դրամական միջոցներից պահումներ կատարելու համար:

11.10 Քարտապանը ֆինանսական պատասխանատվություն է կրում վճարային քարտով կամ դրա վավերապայմանների կիրառմամբ և կից քարտերով կատարված իր կողմից չարտոնված և (կամ) չիրականացված բոլոր գործարքների համար, եթե չի իրականացվել վճարային քարտի կասեցում, բացառությամբ Stand-in հավաստագրում ստացած գործարքների:

11.11 Քարտապանի կողմից կից քարտերի փակման մասին ծանուցում ստանալուց հետո Բանկը պատասխանատվություն չի կրում կից քարտերով արդեն կատարված չհավաստագրված գործարքների համար:

11.12 Բանկը որևէ պատասխանատվություն (գույքային, ֆինանսական եւ այլն) չի կրում քարտապանի առջև երրորդ անձանց կողմից կեղծված կամ զեղծարարությամբ քարտապանին տրամադրված քարտի օգտագործմամբ իրականացված գործարքների հետևանքով քարտապանին պատճառած վնասների համար և քարտապանին այդ եղանակով պատճառված վնասները Բանկի կողմից չեն հատուցվում:

11.13 Բանկը պատասխանատվություն չի կրում սույն կանոններով սահմանված կարգով հաճախորդի կողմից վճարային քարտի ոչնչացում չիրականացնելու պատճառով հաճախորդի կրած վնասների կամ այլ բացասական հետևանքների համար:

11.14 Բանկը չի կրում Քարտապանի քարտով զեղծարարության/խարդախության կատարման ռիսկը և դրանով պայմանավորված որևէ ֆինանսական պատասխանատվություն, եթե քարտապանը, ստանալով SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով տեղեկացումը իր քարտով կատարված գործարքի վերաբերյալ, անհապաղ չի տեղեկացրել Բանկին այդ գործարքը իր կողմից կատարված լինելու կամ չլինելու վերաբերյալ:

11.15 Եթե քարտապանը սահմանված կարգով դիմել է Բանկ իր քարտի համար SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով տեղեկացման ծառայությունը ակտիվացնելու համար, որից հետո չի ստացել տեղեկացում քարտով կատարվող գործարքների վերաբերյալ, ապա այդ գործարքների գծով զեղծարարության/խարդախության ռիսկը կրում է Բանկը, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վավերացված է Քարտապանի կողմից կամ վերջինիս կողմից գործարքի բողոքարկումը ենթակա է մերժման սույն կանոնների 8-րդ գլխին համապատասխան, որոնց դեպքում կատարված գործարքների ֆինանսական հետևանքները կրում է քարտապանը:

11.16 Սույն կանոնների 11.14 և 11.15 կետերով սահմանված դրույթները չեն կիրառվում այն դեպքում, երբ քարտապանին SMS կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցով հաղորդագրությամբ գործարքի վերաբերյալ ծանուցումը ժամանակին կամ ընդհանրապես չի տրամադրվել կամ քարտապանը կանխարգելիչ միջոցառումներ չի իրականացրել կապի խափանման կամ հեռահաղորդակցման օպերատորի մոտ ծագած տեխնիկական կամ այլ խնդիրներ առաջանալու հետևանքով:

11.17 Մինչև քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելը վճարային քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը, բացառությամբ սույն կանոնների 11.15 կետով նախատեսված դեպքերի:

11.18 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Բանկին պատճառված բոլոր վնասների համար (ներառյալ՝ բաց թողնված օգուտը) և սույնով անհետկանչելիորեն հանձնարարում է Բանկին անակցեպտ կարգով Բանկին պատճառված վնասի գումարները դուրսգրել Հաճախորդի բանկային հաշիվներից և ուղղել այդ պարտավորությունների մարմանը:

11.19 Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդին սպասարկելու ընթացքում Հաճախորդի կորուստների և վնասների համար, եթե դա արդյունք է կապի կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, համակարգի օպերատորների և այլ երրորդ անձանց կողմից տրամադրվող ծառայությունների ընդհատման, դադարեցման, պետական մարմինների ակտերի, միջազգային իրավունքի նորմերի, միջազգային կառույցների և/կամ օտարերկրյա պետությունների կողմից սահմանված պատժամիջոցների հիման վրա կիրառված միջոցների բլոկավորումների (սառեցումների), անհաղթահարելի ուժի ազդեցության, հաճախորդի գործողությունների (անգործության), ինչպես նաև հաճախորդի կողմից իր իրավունքների չարաշահման և իրավասությունների սահմանազանցման: Բանկը նաև պատասխանատվություն չի



կրում քարտով կատարված գործառնությունների համար՝ Հաճախորդի մահվան (լուծարման), անգործունակության, անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նման այլ դեպքերում, եթե չի ստացել նշված փաստերի վերաբերյալ գրավոր հավաստում և այդ հանգամանքը ազդել է Բանկի վարքագծի վրա: Ընդ որում, Բանկը, հիմք ընդունելով օրենսդրության պահանջները, համապատասխան փաստերը հիմնավորող փաստաթղթերի բավարար լինելը որոշում է իր բացառիկ հայեցողությամբ:

12 Եզրափակիչ դրույթներ

12.1 Պայմանագրի կնքումը

12.1.1 Պայմանագիրը համարվում է կնքված, իսկ գրավոր ձևը պահպանված, Բանկի հայտարարած պայմաններով, ներառյալ Կանոնները, սակագները և այլն՝ (1) Բանկի կողմից հաճախորդի առաջարկն ակցեպտավորելու դեպքում և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների լրիվ և ամբողջական կատարումը:

12.1.2 Պայմանագրի գործողության ընթացքում Բանկի և քարտապանի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը ենթակա են լուծման դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, եթե կողմերը փոխադարձ գրավոր համաձայնությամբ այլ բան չեն որոշել:

Պայմանագրով Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված պահանջներով քարտապանը կարող է դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի հաշտարարին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունները պարտադիր իրավաբանական ուժ ունեն կողմերի իրավահաջորդների համար¹:

12.1.3 Պայմանագրի լուծումը կարող է իրականացվել յուրաքանչյուր կողմի պահանջով:

12.1.4 Քարտապանը կարող է ցանկացած ժամանակ լուծել Պայմանագիրը՝ լրացնելով և Բանկին ներկայացնելով Բանկի կողմից սահմանված կարգով վճարային քարտի և քարտային հաշվի փակման դիմում կամ հեռախոսազանգի միջոցով Բանկին դիմելով և ոչնչացնելով վճարային քարտը:

12.1.5 Բանկը վճարային քարտի և քարտային հաշվի փակման դիմումը ստանալուց հետո ստուգում է քարտային հաշվի նկատմամբ արգելանքների կամ քարտային հաշվի փակումը սահմանափակող այլ գործոնների առկայությունը և վերջիններիս բացակայության դեպքում 7 աշխատանքային օրվա ընթացքում կասեցնում է վճարային քարտի գործողությունը, կատարում է վճարային քարտով կամ դրա վավերապայմաններով իրականացված գործարքների ձևակերպում և գանձում է սակագներով սահմանված սույն Կանոնների 5.8 կետով սահմանված կարգով բոլոր գանձման ենթակա միջնորդավճարները, տոկոսները, տույժերը, տուգանքները և վերադարձնում է Քարտապանին քարտային հաշվին առկա դրամական միջոցները և հաշվարկված տոկոսները կամ փոխանցում է նշված դրամական միջոցները համաձայն Քարտապանի դիմումի և փակում է վճարային քարտը և քարտային հաշիվը, Պայմանագիրը համարվում է լուծված: Ընդ որում, քարտային հաշվի գծով պարտավորությունների առկայության դեպքում քարտային հաշիվը փակվում է, սակայն Պայմանագիրը շարունակում է գործել միայն պարտավորությունների (ներառյալ սույն կանոնների 12.1.77 կետով սահմանված հիմքով ձևավորված) և դրանց վրա հաշվեգրվող տուգանային տոկոսների մասով՝ մինչև դրանց ամբողջական մարումը, եթե այլ բան նախատեսված չէ հաճախորդի՝ Բանկին ներկայացրած քարտի և քարտային հաշվի փակման դիմումով:

12.1.6 Բանկի նախաձեռնությամբ Պայմանագիրը կարող է լուծվել սույն Կանոնների 4.12.2 կետով սահմանված քարտային հաշվի շարժի բացակայության դեպքում:

12.1.7 Քարտապանը ֆինանսական պատասխանատվություն է կրում այն գործառնությունների համար՝ անկախ մեղքի բացակայությունից, որոնք իրականացվել են վճարային քարտով (ներառյալ դրա բոլոր վերաթողարկումները) կամ դրա վավերապայմանների կիրառմամբ և (կամ) ներկայացվել են Բանկին

¹ Կարևոր նշում. Հայտնում ենք Ձեզ, որ Բանկը իրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե Ձեր կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցել 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Դա նշանակում է, որ Բանկը չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացված որոշումները այն պահանջների գծով, որոնց գումարը չի գերազանցել 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:



վճարահաշվարկային համակարգերի կողմից վճարային քարտի և քարտային հաշվի փակման դիմումը ներկայացնելուց և (կամ) քարտային հաշիվը փակելուց և (կամ) Պայմանագիրը լուծելուց հետո, եթե դրանք հաշվանցվել են Բանկի կողմից և իրականացվել են վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան և (կամ) առկա են քարտապանի կողմից դրանց իրականացման հիմքերը: Պարտավորությունները ենթակա են կատարման դրանց առաջացումից հետո 30 օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված պատասխանատվությունը չի առաջանում, եթե գործարքը (գործառնությունը) կատարվել է վճարային քարտի վավերականության ժամկետի ավարտից 45 օր հետո (սկսած 46-րդ օրվանից):

12.1.8 Քարտի և քարտային հաշվի փակման, վճարային քարտի վերաթողարկման, վճարային քարտի վավերականության ժամկետի ավարտի դեպքերում (եթե գործարքը (գործառնությունը) կատարվել է վճարային քարտի վավերականության ժամկետի ավարտից հետո 45 օրվա ընթացքում), Քարտապանը կրում է ֆինանսական պատասխանատվություն տվյալ քարտով կատարված գործառնությունների համար՝ անկախ մեղքի բացակայությունից:

12.1.9 Բանկին ուղղվող բոլոր տեսակի դիմումները ներկայացվում են Բանկի կողմից սահմանված ձևաթղթերով, եթե այդպիսիք նախատեսվում են Բանկի կողմից:

12.2 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

12.2.1 Սույն կանոններով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Բանկը և Քարտապանը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն կանոններում նշված պարտավորությունների կատարումը:

13 Ծանուցում

Հարգելի հաճախորդ,

Ուշադրություն: Խնդրում ենք ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ): Հիմնադրամի գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Վազգեն Սարգսյան 6, 375010, հեռախոսը՝ 58-35-14, ինտերնետային կայքը՝ www.adgf.am: Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) սահմանումներին:

13.1 Հատուցման դեպք

13.1.1 Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ

- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետև՝ անվճարունակ բանկ):

13.1.2 Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴԻՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝



Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդին ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները՝ ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժույթային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 ՀՀ դրամից:

13.1.3 Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
- դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
- ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
- զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ ՀՀ տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

13.1.4 Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր



Կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Ուշադրություն: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին: